


**ԲԻԶՆԵՍ ՄԻԶԱՎԱՅՐ**

**Համաշխարհային ՀՆԱ-ի աճը, %**

**Համաշխարհային առևտրի աճը, %**



Տնտեսության անկման վատթարագույն շրջանն արդեն անցյալում է, բայց «Economist Intelligence Unit»-ը 2010 թվականին տնտեսության կտրուկ աճ չի ակնկալում:

Համաշխարհային արտադրանքը կաճի ընդամենը 3,2%-ով, այսինքն՝ շատ ավելի ցածր քան 2007 թվականի 5%-ը: Այն տնտեսության աճը, որը սպասվում է 2010 թվականին, հիմնականում կապահովվի ֆինանսական աջակցության ծրագրերի միջոցով՝ վերականգնելով մասնավոր հատվածի նկատմամբ վստահությունը և ամրապնդելով ֆինանսական կայունությունը: Նույնիսկ այդ դեպքում ավելի հարուստ երկրների զարգացումը/առաջխաղացումը կկազմի 1,7 %: Այս ցուցանիշին հակառակ՝ զարգացող երկրների մոտ տնտեսության աճը կկազմի մոտ 5,2 %: Չինաստանը կառաջնորդի զարգացող աշխարհի տնտեսությունը: Ենթակառուցվածքների վրա կատարվող ծախսերը կօգնեն երկրին ապահովել ավելի քան 8,6 %-ի տնտեսության աճ:

Այն, ինչ լավ է Չինաստանի համար, լավ է նաև Բրազիլիայի համար. կմեծանա զարգացող Միջին Թագավորության պահանջարկը Բրազիլիայի ապրանքների նկատմամբ:

Համաշխարհային առևտուրը 2010 թվականին կմնա թույլ դիրքերում: Պաշտպանողական օրենսդրությանն առանձնակի վտանգ չի սպառնի, բայց երկրները կարող է մեծացնեն առևտրի նկատմամբ եղող խոչընդոտները օրինական հիմքերով, քանի որ երկրների մեծ մասում սակագները Համաշխարհային Առևտրի Կազմակերպության կողմից սահմանված սակագներից ցածր են:

Տոկոսադրույքները կմնան ցածր: Չնայած վարկերը հասանելի կլինեն ավելի շատ խոշոր ընկերությունների համար, այնուամենայնիվ, փոքր ընկերություններն էլ վարկերի կարիք կունենան:

**ԱՎՏՈՄԵԹՆԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**



**Վատ Միջին Լավ**

Հաղթահարելով արդյունաբերության պատմության վատթարագույն ժամանակահատվածը՝ համաշխարհային ավտոմեքենաների արդյունաբերությունը 2010 թվականին կրկին կբռնի վերականգնման ուղին: Ամբողջ աշխարհում մեքենաների գրանցումը կաճի 4.7 %-ով, որոնց գլխավորում են Ասիան և Միացյալ Նահանգները: Մեքենաների վաճառքն, այնուամենայնիվ, կնվազի արևմտյան Եվրոպայում, որտեղ պետության աջակցության և արտադրության կտրուկ կրճատման համակցությունը կապացուցի, որ արդյունաբերությունը կգոյատևի քիչ թե շատ ներկայիս ձևով: Միացյալ Նահանգների General Motors ընկերությունը, որի սեփականատերերն են Միացյալ Նահանգների և Կանադայի կառավարությունները, երկու տարվա ընթացքում պետք է վերադառնա շահութաբեր ցուցանիշների: Chrysler-ը նույնպես կվերականգնի իր ուժեղ դիրքերը, երբ վերականգնվի պահանջարկը: Իսկ Ford-ը կհակյտնվի ոչ երանելի դրության մեջ, երբ տրամադրված վարկը չբավարարի վերականգնելու իր նախկին դիրքերը շուկայում: Մեքենաարտադրողների համար ամենապայծառ կետը Չինաստանն է, Լատինական Ամերիկան և Հնդկաստանը, որտեղ մեքենաների վաճառքը կազմում է համապատասխանաբար 13%, 5% և 8%:

**Մարդատար մեքենաների գրանցման ցուցանիշները, մլն**

Սպիա և Ավստրալիան՝ հարակից կղզիներով	17.5
Հյուսիսային Ամերիկա	11.3
Արևմտյան Եվրոպա	10.7
Լատինական Ամերիկա	3.1
Երևելյան Եվրոպա և Ռուսաստան	2.7
Միջին Արևելք և Աֆրիկա	0.7

Երևելյան Եվրոպայում մեքենաարտադրության զարգացման հեռանկարը դեռ ուրվագծվում է մշուշոտ: Չնայած նավթի ցածր գներին՝ մեքենաարտադրողները ներդրումներ են կատարում վառելիք խնայող տեխնոլոգիաներում: 2010 թվականին, էլեկտրականությամբ աշխատող մեքենաները չեն ծառայի միայն գնումներ կատարելու նպատակով փոքրիկ ճանապարհորդությունների համար: Մինչև 2015 թվականը Lamborghini-ն և Ferrari-ն նույնպես կմիանան այդ խաղին: Արդյունաբերությունում առկա խնդիրները չեն խանգարի շուկայում նոր խաղակախցների ի հայտ գալուն: Չինական ամենամեծ Geely ընկերությունը պլանավորում է մինչև 2010 թվականի ավարտը ներկայացնել 9 նոր մոդել, իսկ մինչև 2015 թվականը՝ 42:

**ՄԱՍՈՌԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ**



**Վատ Միջին Լավ**

Զարգացած երկրների սպառողները, անհանգստացած գործազրկությունից և տների աննկայուն գներից, դեռ կմնան մտահոգ՝ հետագայում ճնշում գործադրելով մանրածախ առևտրով զբաղվողների վրա՝ մղելով նրանց դեպի համաշխարհային շուկա: Չինաստանը կլինի ամենամեծ նվերը զարգացող շուկաների շրջանում իր մանրածախ առևտրի ծավալներով, որը կհասնի մոտ 9 %-ի: Կառավարությունը հակված է խթանելու երկրի սպառումը բարձրացնելու, արտահանումների և ներդրումների նկատմամբ վստահությունը բարձրացնելու վրա: Գլոբալ տեսանկյունից, մանրածախ վաճառքը կհասնի մոտ 1.7 %-ի:

Հայտնի բրենդների նկատմամբ եղող մեծ հետաքրքրությունը կպահպանվի: Աշխարհի ամենամեծ մանրածախ առևտրի կենտրոնը՝ Վոլ Մարթը, որը 2009 թվականին իր առաջին խոշոր առևտրի կետը բացեց Հնդկաստանում Բարթի Գրուպ

ընկերության հետ համատեղ, մտադիր է առևտրի ցանցն ընդլայնել ևս 10-ով մինչև 2011 թվականը:

ԱՄՆ-ում ամենախոշոր կոշիկի մանրածախ առևտրի ցանցը 2010 թվականին կունենա իր առաջին ներկայացուցչությունը Ռուսաստանում և Միջին Արևելքում՝ Payless ShoeSource բրենդով:

Գործարանների համար նոր արտադրանքի նորամուծությունը առաջնային խնդիր կլինի:

Սպառողական էլեկտրոտեխնիկական ընկերությունները բարձր խտության հեռուստացույցների մեծ պահանջարկ են ակնկալում՝ կապված ֆուտբոլի աշխարհի առաջնության հետ: Սուպեր բարակ, նոր OLED HDTV էկրանները 2010 թվականին կհայտնվեն ողջ շուկայի ուշադրության կենտրոնում: Ճապոնիայի Նինտենդոն՝ Wii-ի ստեղծողը, ակնկալում է վաճառել 26 մլն հատ ապրանք՝ համաշխարհային մասշտաբով 12 ամսիների ընթացքում մինչև 2010 թվականի մարտ ամիսը, այսինքն՝ ավելի շատ քան նախորդ տարվա ընթացքում: Գնային պատերազմը Microsoft Xbox-ի և Sony PlayStation-ի միջև անխուսափելի է թվում:

**ԶԵՆՔ ՈՒ ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**




Միացյալ Նահանգների զենք ու զինամթերքի համար ծախսվող գումարը 2010 թվականին կգերազանցի կես տրիլիոն ԱՄՆ դոլարից ավելին, չնայած այն հանգամանքին, որ Իրաքի հետ պատերազմն արդեն նահանջում է: Աֆղանստանի հետ պատերազմը նախնական շրջանում ավելի մեծ ծախսեր կպահանջի, քան Իրաքի պատերազմի պարագայում էր՝ համապատասխանաբար \$65 մլրդ և \$61 մլրդ: Մինչդեռ սրանցից ոչ մեկն ընդգրկված չէ զենք ու զինամթերքի արդյունաբերության համար նախատեսված բյուջեի մեջ: Միացյալ Նահանգների ռազմական ծախսերը կկազմեն աշխարհի ընդհանուր ռազմական ծախսերի մոտ 40 %՝ 7-8 անգամ ավել քան Չինաստանինը: Թալիբանի և Ալ-Քաիդայի դեմ մղվող պատերազմի համար Պակիստանը կստանա \$1.5 մլրդ ռազմական և ֆինանսական օգնություն առաջիկա 5 տարիների ընթացքում: Միայն

Իսրայելը 2010 թվականին կստանա \$2.8 մլրդ՝ ֆինանսավորելու Arrow բալիստիկական հրթիռային պաշտպանության համակարգը, որը ձևավորվել է Իրանի հետ համատեղ:

Հարավային Կորեայի պաշտպանության համակարգի ամրապնդման համար նախատեսված ծախսերը 2010 թվականին կավելանան 3,8 %-ով:

Ռուսաստանը 2010 թվականին նախատեսել է ծախսել ո. 470 մլրդ նոր զենքերի ձեռքբերման և ենթակառուցվածքի վրա նախատեսված ծախսերի համար, այսինքն՝ ռազմական բյուջեի մոտ \$35 մլրդ մարք: Չնայած Ռուսաստանն իր ծախսերի 40 %-ը տրամադրելու է ռազմածովային նավատորմին՝ այնուամենայնիվ, հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է ցամաքային ուժերի, հատկապես Վրաստանի սահմանին մոտ տարածաշրջանի գործերի պատրաստվածության վրա:


**ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ**



2009 թվականը եզրափակելով ընդամենը 3.1% աճով՝ Միացյալ Նահանգների մանրածախ ինտերնետային առևտուրը, բացառությամբ ճանապարհորդությանը, թվային բեռնումների և տոմսերի ձեռքբերմանը, 2010 թվականին կաճի 5.5%-ով, այսինքն՝ մինչև \$135,2 մլրդ՝ eMarketer ընկերության հետազոտության և վերլուծության համաձայն: 2011 թվականին ինտերնետային վաճառքի պահանջարկն էլ ավելի կմեծանա, իսկ ևս մեկ տարի անց աճը կկազմի 11%: Ավելին, այս շուկան իր աճի տեմպերով կհասնի այն մակարդակին, որն կանխատեսում էին նախքան ճգնաժամը: Նույնիսկ այս դեպքում մեկ այլ հետազոտության վկայությամբ՝ ինտերնետային առևտուրը Միացյալ Նահանգների ընդհանուր մանրածախ առևտրի զգալի մասն է կազմում՝ հասնելով 8%-ի մինչև 2012 թվականը, որը 2010 կկազմի մոտ 6%: Ինտերնետային աշխարհի առևտրային գործընթացները կայանում է ոչ թե գործարքների, այլ տեղեկատվության ձեռքբերման/ հասանելիության մեջ:


Հանրախանութներում իրականացվող առևտուրը, որը խթանվում է ինտերնետային որոնումների արդյունքում հասանելի դարձած տեղեկատվության միջոցով, երեք անգամ մեծ է, քան ինտերնետով իրականացվող առևտուրը: Մինչև 2013 թվականը աշխարհում 2.2 մլրդ բնակչությունն իր առևտուրն իրականացնելու համար կօգտվի ինտերնետային նման ծառայություններից, որից 17% միայն Չինաստանում: Օրեցօր աճող ինտերնետային առևտրի արդյունաբերությունն աշխարհի ամենախիտ բնակչությունն ունեցող երկրում IDC-ի ցուցանիշների համաձայն 2010 թվականին կաճի 28,3 %-ով: Չինաստանում ինտերնետային առևտրից օգտվող բնակչության թիվը մինչև 2012 թվականը կարող է հասնել 100 մլն-ի: Լատինական Ամերիկյան ստիպված կլինի իր օրենքներում փոփոխություններ կատարել՝ ինտերնետային առևտրի գործունեությանը չխոչընդոտելու նպատակով:

**Համաշխարհային լայնամասշտաբ բաժանորդագրություններ, մլն 2008**



Նույնիսկ այս դեպքում ինտերնետային առևտուրը, ներառյալ ճանապարհորդությունն ու տուրիզմը, 2010 թվականին կհասնի մոտ \$30 մլրդ-ի: Բրազիլիայի առգիծ առևտուրը 2010 թվականին կաճի 40%-ով:

**ԷԼԵԿՏՐՈՒԵՆԵՐԳԻՆ**




“Կանաչ” էներգետիկական արդեն սկսում է թափ առնել, բայց ածուխը դեռ շարունակում է էներգիայի աղբյուր հանդիսասանալ աշխարհի

ամենամեծ զարգացող երկրներում: Չինաստանից և Հնդկաստանից ստացվող ածխի պահանջարկն այն կդարձնի ամենաարագ աճող վառելանյութը 2010 թվականին՝ ածխի սպառման տոկոսային ցուցանիշը հասցնելով մինչև 3.3 %-ի: “Chindia”-ի աճը կկազմի այդ աճի ավելի քան 80%-ը: Ածխի պահանջարկը զարգացած երկրներում մեծ չի լինի, քանի որ այդ երկրներում ավելի մաքուր էներգետիկ տեխնոլոգիաների պահանջարկն առաջնային շարքերում է դասվում: Չինաստանը՝ աշխարհի ամենամեծ ածխի սպառողը, մինչև 2011 թվականը կունենա մոտ 700,000 մեգավատ էներգիայի ստացման համար ածխի սպառում, որը կկազմի ածխի համաշխարհային սպառման մոտ 38%-ը: Նավթի համաշխարհային պահանջարկը 2010 թվականին կաճի 1.1 %-ով՝ պայմանավորված դանդաղ տնտեսական աճով: Բայց նավթի գները կկարգավորվեն, քանի որ տնտեսությունը բռնել է վերականգնման ուղին: North Sea Brent-ը, կատարելության Եվրոպական չափանիշը, միջինում մեկ բարելի համար կհաշվի \$ 74, որը 2009 թվականին հաշվել է մոտ \$62:

Միացյալ Նահանգներում, Օբամայի ադմինիստրացիայի “կանաչ” նախաձեռնությունները Կոնգրեսում կդառնան շարունակական փոխզիջման առարկաներ: Հեղուկ կենսավառելիքի վաճառքը կշարունակի աճել երկնիշ թվով հարուստ տնտեսություններում, բայց նրա ազդեցությունը դեռ կմնա սահմանափակ: Էներգիայի Համաշխարհային գործակալության հավաստմամբ՝ դեռ ավելի քան 20 տարի է հարկավոր, որպեսզի կենսավառելիքի ցուցանիշը կազմի հեղուկ վառելիքի շուկայի 5%-ը: Ընդհանուր առմամբ, գործակալությունը ակնկալում է, որ առաջնային էներգետիկ պահանջարկը, նոր աղբյուրների համակցմամբ, 2030 թվականին կհասնի 10%-ի այն դեպքում, երբ 2006 թվականին այն կազմել է 7%:

Նավթի գինը, Brent, %/ բարել



**ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



Վաստ Միջին Լավ

2010 թվականին համաշխարհային ծախսը զավարճությունների ոլորտի վրա կաճի ընդամենը 0.4 %-ով, իսկ 2011 թվականին՝ 3.2 %-ով, վկայում է PwC-ն: Այնուամենայնիվ, որոշ շրջաններ այս ոլորտում հաջողության կհասնեն. Եթե Ճապոնիան հեռանա Ասիա-Ֆառից օվկիանոսյան միավորումից, ապա 2013 թվականին այս ոլորտի տարեկան համախառն տոկոսային աճի ցուցանիշը կկազմի 7.1 %: Շարժական երաժշտական ծառայությունները և բեռնումները կդառնան ոլորտի առաջնային հետաքրքրությունները: Այսպիսով, եթե 2009 թվականին շուկայի աճը գնահատվել է \$2.2 մլրդ, ապա 2013 թվականին շուկայի աճը կհասնի \$5.5 մլրդ-ի: Հնդկաստանի Bollywood-ի տարեկան համախառն տոկոսային աճը կկազմի 11.6 % առաջիկա հինգ տարիների ընթացքում՝ համաձայն PwC-ի, և մինչև 2013 թվականը կարժենա \$4 մլրդ: Հնդկաստանի հեռուստատեսության արդյունաբերությունը կապահովի շատ չնչին աճ՝ մոտ 11.4 %: Այդ մասով հիմնական եկամուտը կապահովվի հեռարձակման արտաքին և ներքին պատվերներից:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



Վաստ Միջին Լավ

2010 թվականին արևմտյան խոշոր բանկերը կկայունանան, բայց նրանց շահութաբերությունը կմնա համեստ դիրքերում՝ մասամբ պայմանավորված այն հանգամանքով, որ կարգավորող մարմինները կապիտալի նկատմամբ ավելի խիստ պահանջներ կառաջադրեն: Սահմանված ցածր տոկոսադրույքները կպահպանվեն, քանի որ կենտրոնական բանկերը փորձում են նաև այդ եղանակով ինչ-որ չափով խթանել համաշխարհային տնտեսության աճին: Բանկային նոր վարկերը 2010 թվականին կաճեն 5.9 %-ով, որոնք, իրականում,

ավելի քիչ են, եթե հաշվի առնենք ինֆլյացիան: Հազեցած շուկաները և ավելի խիստ օրենսդրական կարգավորման դաշտը ստիպում են խոշոր բանկերին ուշադրությունը սևեռել զարգացող շուկաների վրա, որտեղ ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը համեմատաբար մեղմ է արտահայտված:

Տարին հաջող կլինի ակտիվներ կառավարողների համար՝ շնորհիվ ծերացող բնակչության և աշխատավարձերի հետ կապված կենսաթոշակային ծրագրերի կտրուկ կրճատման: Արտարժույթի փոխանակումները հազիվ կկարողանան առևտրային և քլիրինգային գործունեություն ապահովել դերիվատների ոչ բորսայական շուկայում: Մարսափելի 2009 թվականից հետո, մասնավոր կառույցները կունենան ավելի մեծ հնարավորություններ իրենց կապիտալը վստահելի ոլորտներում ներդնելու համար, բայց այս տարի ներդրվող կապիտալի չափն ավելի մեծ կլինի քան նախորդ տարի:

**ՄԱՆԱՍԹԵՐՔ ԵՎ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ**



Վաստ Միջին Լավ

2010 թվականին սննդամթերքի մատակարարման խնդիրը առաջնային տեղ է զբաղեցնում: Gulf Co-operation Council-ի վեց անդամ պետություններ, որոնք 2010 թվականին կծախսեն մոտ \$10 մլրդ սննդամթերքի ներմուծման համար, նպատակ ունեն Աֆրիկյան դարձնել իրենց “հացի աղբյուրը” Մոզամբիկի, Սենեգալի, Մուդանի և Տանզանիայի օգնությամբ: Իսկապես, Եթովպիայի կենտրոնական վիճակագրության գործակալությունը վկայում է, որ երկրի 13.3 մլն մանր սեփականատերեր տրամադրում են ավել քան մեկ մլն հեկտար անմշակ հողատարածք արտաքին ներդրողների համար: Economist Intelligence Unit-ի կանխատեսումների համաձայն՝ 2010 թվականին ակնկալվում է

աննդամթերքի և խմիչքների մոտ 4.4% գների աճ՝ պայմանավորված զարգացող երկրներում կենդանիների կերակրման համար պահանջվող կերի մեծացող պահանջարկով: Շաքարավազի գինը 2010 թվականին կբարձրանա 15%-ով: Զարգացող երկրներից ստացվող պահանջարկը մեծ ազդեցություն չի ունենա գնաճի վրա, գնաճը հիմնականում պայմանավորված է կենսավառելիայութի օգտագործման համար անհրաժեշտ շաքարեղեգի պահանջարկի բարձրացման հետ: Ճգնաժամը կրճատել է սուրճի սպառումը զարգացող երկրներում, որտեղ այն արդեն իսկ շքեղություն է համարվում, բայց Արևմտյան մանրածախ առևտրում սուրճի առևտուրը կենտրոնական տեղ է զբաղեցնում: Սա, իհարկե, լավ լուր է Բրազիլիայի համար, որը կարտադրի 43.5 մլն սուրճի պարկ 2010 թվականին: Հայտնի բրենդերով և էժան ապրանքներով աննդամթերքի ընկերությունները 2010 թվականին վերելք կապրեն: Միացյալ Նահանգների հսկա HJ Heinz-ի եկամուտը կաճի 4-6%-ով՝ իր անվանական կետայնների արտադրանքով, որը կկազմի \$10.6-10.8 մլրդ: Եկամտի մոտ 60 %-ը կստացվի Միացյալ Նահանգներից դուրս այլ շուկաներից:

**ԱՆՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**



**Վատ Միջին Լավ**

Միացյալ նահանգներում երկար սպասված բարեփոխումները առողջապահական ոլորտում կիրականացվեն հենց այս տարի, բայց մինչև ժամանակ ռեկորդային չափերի հասած հանրային պարտքերը կուրվագծվեն իրենց խորությամբ: Նշենք նաև, որ 2010 թվականին կյանքի տևողությունը հաշվարկվել է 72.5 տարեկանը, որտեղ 65 տարեկան և ավելի բնակչության թիվը կազմում է ավելի քան 523 մլն կամ բնակչության 7.6 %-ը: Սա կբարձրացնի տարեց բնակչության կախվածության հարաբերակցությունը՝ նվազեցնելով այն հարկերի թիվը, որոնք առկա են ֆինանսավորելու առողջապահության համակարգերն ամենուրեք:

Կառավարություններն ու ապահովագրական ընկերությունները կկրկնապատկեն իրենց ջանքերը առողջապահության համակարգում ծառայությունների գները ցածր պահելու համար: Աշխարհի խոշորագույն արտոնագրված դեղահաբերի արտոնագրերի ժամկետները կլրանան: EvaluatePharma ընկերության տվյալների համաձայն՝ 2010-2012 թվականների ընթացքում աներևակայելի \$ 133 մլրդ –ի դեղահաբերի արտոնագրերի ժամկետները կլրանան՝ վնասներ հասցնելով Pfizer և Eli Lilly ընկերություններին: Նրանց կորուստը կլինի ջենեթիկ դեղահաբեր արտադրող գործարանների շահույթը. ջենեթիկ դեղահաբերի վաճառքը կխթանի դեղահաբերի ընդհանուր շուկայի 5.1%-ի աճին 2010 թվականին:

Աշխարհի Առողջապահական Կազմակերպությունն ակնկալում է, որ խոզի գրիպը կշարունակվի նաև 2010 թվականին՝ վնասներ հասցնելով աշխարհի բնակչության մոտ մեկ-երրորդ մասին մինչև 2011 թվականը: Մինչ այժմ, խոզի գրիպի գրանցված դեպքերի մեծ մասը նկատելի է դարձել լավ առողջապահական համակարգ ունեցող զարգացած երկրներում, բայց վարակը կարող է ավելի շատ մահվան դեպքեր արձանագրել հենց այն շրջաններում, որտեղ առողջապահական համակարգը թույլ է զարգացած:

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵՆՈՂՈՂԳԻՄ**



**Վատ Միջին Լավ**

2009 թվականի ճգնաժամի ընթացքում մեծ զրկանքներ կրեց նաև SS արդյունաբերությունը, բայց ակնկալվում է, որ այն կգրավի իր նախկին աճի դիրքերը 2010 թվականին: Համաշխարհային SS ծախսերը կավելանան 4.4%-ով՝ պայմանավորված ծրագրերի և ծառայությունների նկատմամբ պահանջարկի կտրուկ աճով: Համակարգիչների վաճառքը կմեծանա 8%-ով՝ պայմանավորված էլեկտրոնային գրքերի և դյուրակրիչների մեծ պահանջարկով: Այնուամենայնիվ, այս SS ռեսուրսները հավասարապես չեն բաշխվելու. Յուրաքանչյուր 100 մարդու համար նախատեսված է 17 համակարգիչ Միջին Արևելքում և Աֆրիկայում, մինչդեռ

Միացյալ Նահանգներում և Կանադայում յուրաքանչյուր 100 մարդու համար նախատեսված է ավելի քան 97 համակարգիչ: Չինաստանը կմեծացնի իր SS ծախսերը 13.3% -ով, մոտ \$80.2 մլրդ-ով 2010 թվականին, իսկ 2011 թվականին կգերազանցի Գերմանիայի SS ծախսերին: Աշխարհի Semiconductor Trade վիճակագրական կազմակերպությունն ակնկալում է, որ չիպերի վաճառքը 2010 թվականին կաճի 7.3%-ով, \$209 մլրդ, իսկ 2011-ին՝ 8.9%-ով: Մինչև 2011 թվականը այն կանխատեսում է աճ բոլոր տարածաշրջանային շուկաներում, իսկ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը այս ոլորտում շարունակում է մնալ առաջնային դիրքերում, քանի որ Արևմտյան էլեկտրոտեխնիկական գործարաններն իրենց արտադրանքի մեծ մասի սպառումը հենց այստեղ են իրականացնում:

**ՄԵՂԻՄ**




**Վատ Միջին Լավ**

2010 թվականին գովազդը վերելք կապրի՝ ֆուտբոլի աշխարհի առաջնության, ձմեռային օլիմպիական խաղերի և ԱՄՆ-ի ընտրությունների շնորհիվ: 2009 թվականն եզրափակելով մոտ 8.5% աճով՝ համաշխարհային գովազդի ծախսերը 2010-ին կաճեն 1.6%-ով, իսկ 2011-ին՝ 4.3%-ով: 79 խոշորագույն տնտեսություններից 62-ն այս տարի կունենան գովազդներից ստացված մեծ եկամուտ: Արևմտյան Եվրոպան այս ոլորտում կունենա ընդամենը 0.2 %-ի աճ: Արագ զարգացող Չինաստանը կլինի աշխարհի չորրորդ խոշորագույն գովազդի շուկա ունեցող երկիրը՝ հասնելով Բրիտանիային, իսկ Հնդկաստանը կփակի առաջատար տասնյակը: Հյուսիսային Ամերիկան և արևմտյան Եվրոպական շուկաները միասին կկազմեն ընդհանուր համաշխարհային շուկայի 60%-ը:

Zenith-ի կանխատեսումների համաձայն՝ առգիծ գովազդների ծախսերը 2010 թվականին կազմելու են ընդհանուր գովազդների 13.8%-ը՝ \$63.1 մլրդ: Մոցիալական գովազդը գտնվում է կենտրոնում: Ավանդական մամուլը, այնպես ինչպես թերթերը, ամսագրերը, հեռուստատեսությունը և ռադիոն, կշարունակեն զիջել իրենց դիրքերը գովազդային ասպարեզում: Ամսագրերը դեռ կարող են համարվել ինչ-որ տեղ ավելի ընդունելի քան թերթերը, քանի որ դրանց վերարտադրությունը առգիծ տարբերակով ավելի դժվար է:

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ և ԳՈՒՅՔ**



2009 թվականին 16% -ի նվազումից հետո Միացյալ Նահանգների ոչ բնակելի շինարարությունը անկում կապրի ևս 12%-ով 2010 թվականին՝ համաձայն Ճարտարապետների Ամերիկյան Կոնստիտուտի տվյալների: Կոնստրուկտիվ նախագծերը՝ հյուրանոցները, խանութները, առևտրային կենտրոնները և կորպորատիվ գրասենյակները ամենախոցելին կլինեն, բայց այսպես կոչված ինստիտուցիոնալ շուկան՝ դպրոցները, հիվանդանոցները և ենթակառուցվածքների վրա տարվող աշխատանքները վնասներ չեն կրի, քանի որ պետության կողմից ֆինանսական աջակցություն կստանան: Ընդհանուր առմամբ Միացյալ Նահանգների շինարարության արդյունաբերությունը ճգնաժամի ընթացքում մեծ վնասներ է կրել, մոտ 20%, և դեռ կշարունակի ետ նահանջել 2010 թվականին:

Միացյալ Թագավորությունում անշարժ գույքի շուկան կապահովի ընդամենը 2%\_ի աճ մինչև տարեվերջ, իսկ 2011 թվականին՝ մոտ 3.6%-ի աճ: Չինաստանում ոչ բնակելի շինություններում կատարվող ներդրումները կկազմեն երկրի ՀՆԱ-ի աճի մոտ 10%-ը:

Աշխատողները կշարունակեն հեռանալ նաև Միացյալ Արաբական Էմիրություններից, քանի որ անշարժ գույքի և շինարարության ոլորտները ակտիվ դիրքերում չեն: Արդյունքում, Դուբայի բնակչությունը կպակասի 2%-ով 2010

թվականին, բայց Դուբայի Jumeirah հյուրանոցային հսկա ցանցը, չի վիստվում այս ամենից. Այն մտադիր է կառուցել մոտ 30 նոր հյուրանոցներ աշխարհի տարբեր անկյուններում մինչև 2012 թվականը: Ասիական քաղաքները կներգրավեն նոր ներդրումներ՝ կացարաններ կառուցելու ոլորտում:

**ՀՈՒՄՔ**



Հումքի գները այս տարվա ընթացքում կվերականգնվեն: Հանքագործության ոլորտում իրականացվող ներդրումները կմնան պասիվ դիրքերում: Պողպատի գինը մեկ տոննայի համար կկազմի \$517: Ավտոմոբիլային արդյունաբերության նահանջի հետ մեկտեղ, անվաղողեր արտադրողները քիչ պատվերներ կունենան՝ պատճառ հանդիսանալով ռեզիների պահանջարկի նվազեցմանը: 2010 թվականին պղնձի համաշխարհային սպառումը կբարձրանա 3.1%-ով՝ մալուխ արտադրողների ավելի մեծ պահանջարկի դեպքում: Սա, իհարկե, լավ լուր է Չիլիի համար, որն ապահովում է համաշխարհային պղնձի արտադրության մոտ մեկ-երրորդ մասը: Չիլիի Պղնձի Հանձնաժողովն ակնկալում է, որ ազգային արտադրանքը 2010 թվականին կբարձրանա 6.3%-ով, 5.8 մլն տոննայով:

Ոսկու հոսքը առաջ է մղվում աշխույժ ներդրողների կողմից, որոնք մտահոգված են աշխարհի ֆինանսական համակարգով: Այս պահանջարկը չի կարող ամբողջությամբ հավասարակշռել արդուզարդի շուկայում դիտվող շարունակական թույլ դիրքերը: Ոսկու գները, որպես արդյունք, կկազմեն միջինում \$900 մեկ տոննայի համար 2010 թվականին, որը նախորդ տարի կազմել է \$950:

**ՆՈՒԱՐՈՐՈՐԱԿՑՈՒՄ**



Լինեն լավ ժամանակներ, թե վատ, սիրախաղերը բջջային հեռախոսով միշտ էլ մնացել են իրենց կայուն դիրքերում: 2010 թվականին յուրաքանչյուր 100 մարդու համար կլինի 80 բջջային հեռախոսի բաժանորդագրություն:

Թափանցելիությունը հիմնականում մեծ կլինի Եվրոպայում, որտեղ օպերատորների միջև եղող մրցակցությունը մեծ է: Բջջային նոր հեռախոսների հոսքը ամենաարագ զարգացող ոլորտներից մեկը կլինի նույնիսկ աղքատ երկրներում, որտեղ բջջային հեռախոսները շատ հաճախ դիտվում են՝ որպես համակարգիչների փոխարինողներ: Հնդկաստանը և Չինաստանը, որտեղ առաջատար երրորդ սերունդ բջջային հեռախոսների ցանցերն արագ տարածվում են, կունենան մեծ աճ: Հետազոտությունները ցույց են տվել, որ Հնդկաստանի բջջային հեռախոսների հաճախորդների մոտ 17%-ը մինչև 2013 թվականը օգտագործելու է 3G տեխնոլոգիա: 2010 թվականին բջջային հեռախոսների առևտուրը կծաղկի: Նոկիան, աշխարհի ամենամեծ բջջային հեռախոս արտադրողը, կզարգացնի հեռախոսով վճարումներ կատարելու համակարգը, որը հնարավորություն կտա օգտագործողներին բջջային հեռախոսով դրամական փոխանցումներ կատարել, գնացքի տոմսեր գնել և այլն: Հեռախոսի միջոցով բանկային ծառայություններից օգտվելը, որը դեռ զարգացող շուկաներում հանդիպող տենդենց է, էլ ավելի կզարգանա: Հարավ-արևելյան Ասիայում երաժշտության ֆանատները կխթանեն տարածաշրջանում այս ոլորտի զարգացմանը՝ կազմելով գվարձությունների վրա կատարվող ծախսերի մոտ մեկ երրորդը հեռախոսի միջոցով: Ընդհանուր առմամբ 2010 թվականին այս բիզնեսը կաճի մոտ 28%-ով, \$40 մլրդ:



**Վատ                      Միջին                      Լավ**



Համաշխարհային տուրիստական ճանապարհորդությունները 2010 թվականին կաճեն մոտ 2.2%-ով: Հյուրանոցների եկամուտը, ինչպես նաև օդային ճանապարհորդությունը կաճի 1%-ով, որը համեմատաբար ավելի լավ ցուցանիշ է քան նախորդ տարվանը, բայց շատ ցածր ցուցանիշ է:

Օդային ուղիները դեռ պայքարում են վերականգնել իրենց նախկին աճի տեմպերը, այնուամենայնիվ, Boeing-ը կկրճատի 777 ինքնաթիռների արտադրանքը 28 %-ով: Մյուս կողմից, ընկերությունը Ճապոնիայի Նիպոն օդային ուղիներին կտրամադրի իր առաջին 787 Dreamliner ինքնաթիռը:

Միացյալ Նահանգներում հյուրանոցի մեկ սենյակից ստացվող եկամուտը կկազմի 1.6%, 2010 թվականին, 2009 թվականի մոտ 15.7%-ի անկումից հետո: Ճանապարհորդության ոլորտում կնկատվի համեստ աճ: Իսկապես, Բիզնես ճանապարհորդության Ազգային Ասոցիացիայի կանխատեսումների համաձայն՝ մինչև 2013 թվականը ակնկալվում է զլորբալ բիզնես ճանապարհորդության ոլորտում մոտ 1.2%-ի համախառն տարեկան աճ: Իրանական բիզնես ճանապարհորդության ոլորտում ակնկալվում է 9%-ի աճ, իսկ Ռուսաստանում՝ 4%:

Չինաստանի տուրիզմը ծաղկում կապրի աշխարհի ամենամեծ Expo-ի շնորհիվ, որը բացվելու է մայիսին Շանհայում: Մոտ 70 մլն ժողովուրդ ներկա կգտնվեն միջոցառմանը: Իսկ Հարավային Աֆրիկայի տուրիզմին կխթանի ֆուտբոլի աշխարհի առաջնությունը, որտեղից կառավարությունն ակնկալում է ոլորտի մոտ \$2.1մլրդ-ի եկամուտ:

# 2010 թվականին տնտեսության աճ ապահովող երկրները

Քաթարի տնտեսությունը 2010 թվականին կաճի մոտ մեկ քառորդ մասով՝ կապված գազի նոր ծրագրի կիրառման հետ: 2010 թվականին տնտեսության աճ կնկատվի հիմնականում զարգացող երկրներում, որոնց տնտեսության զարգացման գործում դեր են խաղում նաև կողմնակի աջակցությունները և դոնոր երկրները: Իսկ եներգիայի արտադրությունը, ինչպես անցյալում այստեղ պատմության մաս է կազմում. Կոնգոն նավթի արտադրությունից կապահովի տնտեսության մեծ աճ, իսկ ածխաջրածնի արտադրությունը Թուրքմենստանին կօգնի տեղ գրավել 2010 թվականին տնտեսության բարձր աճ ապահովող երկրների լավագույն 12-ի շարքում:

Մեծ տնտեսությունն ունեցող երկրներից Չինաստանն առաջինն է ապահովելու տնտեսության մեծ աճ ճգնաժամից հետո: Հնդկաստանը, զբաղեցնելով 9-րդ տեղը, կարողանում է կրկին վերականգնել իր նախաճգնաժամային տնտեսության շարժը, մասնավորապես՝ ծառայություններ մատուցելու ոլորտում: Իրաքի ետկոնֆլիկտային զարգացումներն երկրին մղում են 10-րդ տեղ: Մադագասկարը՝ 11-րդ տեղը, տնտեսության զարգացումներն ապահովում է արտաքին գրանտների ներհոսքի միջոցով:

Խ/Խ	Երկիր	ՀՆԱ-ի աճ, %
1	Քաթար	24,5
2	Չինաստան	8,6
3	Կոնգո	8,0
4	Թուրքմենստան	8,0
5	Եթովպիա	7,0
6	Ուզբեկստան	7,0
7	Ջիբութի	6,5
8	Շրի Լանկա	6,3
9	Հնդկաստան	6,3
10	Իրաք	6,2
11	Մադագասկար	6,2
12	Վիետնամ	6,0

ԱՎՍՏ ՐԻԱ	
ՀՆԱ-ի աճ	0,8%
ՀՆԱ	\$398 մլրդ
Արժեզրկում	0,8%
Բնակչությունը	8,4 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$ 47.310

Սոցիալ դեմոկրատական կուսակցության և Ավստրիայի ժողովրդական


կուսակցության կողմից իրենց համատեղ ջանքերով կառավարության ուշադրությունը կենտրոնացնում են տնտեսության առավել թույլ կողմերի վրա: Բյուջեի քաղաքականությունը կենտրոնանում է երկրում սպառումների խթանումներին, բանկերի դիրքերը կայունացնելուն և ամրապնդելուն: Ավստրիան միջոցներ կձեռնարկի Եվրոպայի ֆիսկալ դեֆիցիտը նվազեցնելու ուղղությամբ:

ԲԵԼԳԻԱ	
ՀՆԱ-ի աճ	0,8%
ՀՆԱ	\$455 մլրդ
Արժեզրկում	0,0%
Բնակչությունը	10.6 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$ 42.840

Պետական լիազորությունները համայնքային իշխանությանը հանձնելու հարցի վերաբերյալ Ֆլամանդական և ֆրանսախոս կուսակցությունների միջև ծագած տարաձայնությունների պատճառով քաղաքական ուշադրությունն ամբողջությամբ կկենտրոնանա գուտ քաղաքական հարցերի շուրջ՝ տնտեսությանն անկումից փրկելու փոխարեն: Տնտեսությունը կաճի 0.8 %-ով, որը կարող է համարվել ընդամենը ոչ ծայրահեղ ցավալի փաստ այն բոլոր բացասական երևույթների շարքում, ինչպիսիք են գործազրկության անդադար աճը և ապրելու/գոյատևելու չափանիշների լճացումը:

ԲՈՒԼԳԱՐԻԱ	
ՀՆԱ-ի աճ	1,0%
ՀՆԱ	\$50 մլրդ
Արժեզրկում	2.3%
Բնակչությունը	7.4 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$ 6.720

Բուլղարիայի ընթացիկ հաշվի ճեղքվածքի չափը, % ՀՆԱ



Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիսովը և Բուլղարիայի Եվրոպական Չարգացման կուսակցությունը իրենց գործունեության հիմնական շեշտը դնում

են երկրում հանցանքը և կոռուպցիան վերացնելու ուղղության վրա: Ամենայն հավանականությամբ կառավարությունը կկարողանա պահել իր չնչին դիրքերը խորհրդարանում, իսկ եթե հնարավորություն լիներ կազմակերպել նոր ընտրություններ, այն նաև աթոռներ կավելացներ: Տնտեսությունը կաճի դանդաղորեն:

Բուլղարիայի արտաքին պարտքի ծանր բեռը և բյուջեի դեֆիցիտը համատեղ կարող են կառավարությանը ստիպել միանալ Արժույթի միջազգային հիմնադրամից ֆինանսական աջակցություն խնդրողների շարքին:	
--	--

ԽՈՐՎԱԹԻԱ	
ՀՆԱ-ի աճ	0,3%
ՀՆԱ	\$64 մլրդ
Արժեզրկում	2,6%
Բնակչությունը	4,5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$14,300

Կոալիցիայի վերածված կառավարությունը նոր դեկավարություն է սահմանում 2009 թվականին երկրի վարչապետի հրաժարականից հետո: Վերջինիս փոխարինողը չի կարողանում պատշաճ կերպով իրականացնել իր պարտականություններն ու իրավասությունները և, հետևաբար քաղաքականությունը կարող է շեղվել իրական ճանապարհից: Եվրամիության անդամակցության նպատակը կլինի համախմբել կոալիցիային, բայց տարաձայնություններն ի հայտ կգան այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են գյուղացիներին տրվող ֆինանսական աջակցությունը: Ընդհանուր առմամբ տնտեսությունը կունենա մոտ 0,3 %-ի աճ:


ՉԵԽԻԱ	
ՀՆԱ-ի աճ	0,9%
ՀՆԱ	\$194 մլրդ
Արժեզրկում	1,4%
Բնակչությունը	10,2 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$19,050

Հանրային Դեմոկրատական կուսակցությունն ավելի մեծ հնարավորություններ ունի հաղթելու




2010 թվականի հունիսին կայանալիք ընտրություններին և ուղղորդելու կառավարությանը, քան իր ախտյան Սոցիալ Դեմոկրատական կուսակցությունը: Եվրոյին անցնելու երկրի երկարաժամկետ ծրագիրը կտուժի այն կառավարության կողմից, որն առաջնորդվում է եվրոսկեպտիկ իշխանության կողմից:


<b>ԴԱՆԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	0,5%
ՀՆԱ	\$318 մլրդ
Արժեզրկում	1,5%
Բնակչությունը	5,5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$57,470


Դանիայի վարչապետը մինչև 2011 թվականը ընտրություններ կազմակերպելու կարիք չի տեսնում, փոխարենը կտեսնի, թե ինչպես է փոքրամասնություն կազմող կառավարության աջակցությունը մոնտոն հունով զիջում իր դիրքերն այն ժամանակ, երբ տնտեսությունը գույատևելու պայքարի մեջ է: Կառավարության առաջնային պարտականությունը կլինի օգնել վնասներ կրած բանկերին՝ պետական երաշխիքներով և ներդրումներով՝ բարձրացնելու սպառողական և բիզնես ծախսերը: Իջեցված տոկոսադրույքների ուշացված ազդեցությունը, ինչպես նաև հետագայում հարկերի կրճատումը նույնպես կօգնեն այս հարցում: Այս ամենից զատ Դանիայի տնտեսությունը կաճի ընդամենը 0,5 %-ով 2010 թվականին:

<b>ԷՍՏՈՆԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	-3,0%
ՀՆԱ	\$18 մլրդ
Արժեզրկում	0,2%
Բնակչությունը	1.3 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$13.810


Բալթյան երկրները համաշխարհային ֆինանսական ճգնաժամից դուրս եկող երկրների շարքի վերջին մասն են կազմում: 2010 թվականին Էստոնիայի տնտեսությունն անկում կապրի 3%-ով:

-  Բնֆյացիան, %-ային փոփոխություն
-  Ընթացիկ հաշվի ճեղքվածքը, ՀՆԱ-ի %
-  ՀՆԱ-ի աճ %-ային փոփոխություն



<b>ՖԻՆԼԱՆԴԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	0.8%
ՀՆԱ	\$242 մլրդ
Արժեզրկում	0.9%
Բնակչությունը	5.4 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$45.320

Չորս կուսակցությունից բաղկացած կառավարության կոալիցիան վարչապետի գլխավորությամբ կկենտրոնանա տնտեսությանը ճգնաժամից դուրս բերելու գործի վրա: Այդ ամենը կիրականացվի արտահանման միջոցով. Ֆիսկալ քաղաքականությունը կկարողանա իրականացնել աշխատանքի մեծ մասը և բյուջեի դեֆիցիտը գնալով կնվազի: Չնայած այս ամենին, տնտեսությունն արագ չի վերականգնվի:


<b>ՖՐԱՆՍԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	0.9%
ՀՆԱ	\$2.721 մլրդ
Արժեզրկում	0.9%
Բնակչությունը	62.9 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$43.250

Երկրի նախագահը ջանքեր չի ինայի ճգնաժամի հետևանքներն երկրի տնտեսությունից մաքրելու համար՝ կենտրոնանալով գործազրկության նվազեցման և ներդրումային նախագծերի իրականացման ուղղությունների վրա: Երկրի նախագահի առատաձեռնությունը բյուջեի դեֆիցիտը կհասցնի ՀՆԱ-ի մոտ 10 %-ի: Նախագահի ընտրարշավների ընթացքում առանցքային տեղ զբաղեցնող կառուցվածքային բարեփոխումները մղվում են ետին պլան: Այս ամենը կվերականգնի տնտեսության կայունությունը, բայց առանց որևէ դինամիզմի:

<b>ԳԵՐՄԱՆԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	0.5%
ՀՆԱ	\$3.196 մլրդ
Արժեզրկում	0.7%
Բնակչությունը	83.0 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$38.520

Քրիստոնեական Դեմոկրատական Միությունը/Քրիստոնեական սոցիալական միությունը 2009 թվականի ընտրությունների ժամանակ կարողացավ պահել իր դուրսնախոս դիրքերը կառավարությունում:

Ընտրությունների հաղթանակն ոչ միայն նոր հնարավորություն է ընձեռեց կանցլերին, այլ նաև թույլ տվեց Քրիստոնեական Դեմոկրատական Միությանը փոխարինելու իր կոալիցիոն գործընկերոջը՝ Սոցիալ դեմոկրատական կուսակցությանը Ազատ Դեմոկրատական կուսակցության հետ, որն ավելի փոքր է, և այդ կուսակցության աշխարհայացքը համընկնում է Քրիստոնեական Դեմոկրատական Միության աշխարհայացքին: Տնտեսությունը մեծապես վնասներ է կրել ճգնաժամից և այն իր վերականգնման առաջին քայլերը կանի 2010 թվականին, բայց ոչ արագ տեմպերով, քանի որ կառավարությունն առաջնային տեղ է տալիս աշխատանքային և ավտոմեքենաների շուկաների զարգացմանը:

<b>ՀՈՒՆԱՍՏԱՆ</b> 	
ՀՆԱ-ի աճ	0.5%
ՀՆԱ	\$372 մլրդ
Արժեզրկում	0.8%
Բնակչությունը	11.0 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$33.860

Երկրի վարչապետի համար հիմնական խոչընդոտն այն է, թե ինչպես է պատրաստվում ի կատար ածել այն հսկայական խոստումները, որ նա տվել էր 2009 թվականի ընտրարշավների ժամանակ: Սոցիալիստ առաջնորդը կարողացավ լռեցնել ճնշող պահպանողականներին՝ դատապարտելով իրենց ֆիսկալ ծրագիրը՝ որպես ոչ անհրաժեշտ խիստ ծրագիր: Եթե նա շարունակի




իրականացնել գործազրկության նվազեցմանն ուղղված և կրթական ծրագրերը, պալա բյուջեի դեֆիցիտը կարող է հայտնվել ծայրաստիճան վատ դրության մեջ:

<b>ԻՌԼԱՆԴԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	-2,5%
ՀՆԱ	\$218 մլրդ
Արժեզրկում	0,4%
Բնակչությունը	4,2 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$52,390

Իռլանդիան այն երկրներից է, որն ամենաշատը տուժեց ճգնաժամի ընթացքում: Տնտեսությունը դեռ չի կարողանա ձեռքբերել ճգնաժամի հետևանքներից 2010 թվականի ընթացքում: Գործազրկության ցուցանիշը կհասնի 16%-ի, իսկ ֆիսկալ դեֆիցիտը կկրկնապատկվի: Կառավարությունը, որն իրենից ներկայացնում է Ֆիենա Ֆեյլի կողմից առաջնորդվող մի փոքրիկ կոալիցիա, փոքրիկ քայլերով, կաղալով առաջ կշարժվի, բայց, այնուամենայնիվ, չի կարող հասնել մինչև 2010 թվականի իր ժամկետի պաշտոնական ավարտին:

**Ներքին պահանջարկը, € մլրդ**



<b>ԻՏԱԼԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	0,4%
ՀՆԱ	\$2.139 մլրդ
Արժեզրկում	0,9%
Բնակչությունը	58.1 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$36.820

Երկրի վարչապետ Սիլվիո Բերլուսկոնին, ունի կայուն դիրքեր և կարիք չունի

ընտրություններ կազմակերպել մինչև 2013 թվականը: Այնուամենայնիվ, Իտալիայի քաղաքական դաշտի վարանումները, որոնք երևան են գալիս հենց իր` Բերլուսկոնիի կողմից, նշանակում է, որ կառավարության գոյատևումն էրաշխավորված չէ: անկոտրուն ֆիսկալ քաղաքականությունները գրեթե հնարավորություն չեն ընձեռում տնտեսության վերականգնմանը աջակցության ծրագրերով խթանելու համար, իսկ կառուցվածքային բարեփոխումների նկատմամբ հակավաճություն/տրամադրվածության պակասը վկայում է, որ տնտեսությունը ստիպված է ենթարկվել և հանգիստ հունով տանել գլոբալ փոփոխություններն ու հարվածները, եթե այդպիսիք լինեն: Իտալիայի տնտեսական դիրքերը կշարունակվեն թուլանալ:

<b>ԼԱՏՎԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	-4,0%
ՀՆԱ	\$26 մլրդ
Արժեզրկում	-1,7%
Բնակչությունը	2,2 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$11,560


Համաշխարհային ճգնաժամի ալիքները տարածվել են նաև Լատվիայի տնտեսության վրա, որի հետևանքով 2010 թվականին տնտեսությունն անկում կապրի 4%-ով` 2009 թվականի 17%, իսկ 2008 թվականին 4,6% անկումից հետո: Հինգ կուսակցությունից բաղկացած կոալիցիոն կառավարությունը, որը ղեկավարվում է վարչապետի կողմից, երկար կյանք ունենալ չի կարող: Երկրի նախագահը, կփորձի խուսափել 2010 թվականին նոր ընտրություններ կազմակերպելուց, բայց ընտրության հնարավորություն չի ունենա, եթե նոր կոալիցիոն կառավարության հետ բանակցություններն անցնեն ապարդյուն:

<b>ԼԻՏՎԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	-4,5%
ՀՆԱ	\$39 մլրդ
Արժեզրկում	2,1%
Բնակչությունը	3,3 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$11,690

2010 թվականին երկրի տնտեսությունը կշարունակի թուլանալ 4.5%-ով, որը 2009 թվականին արդեն նվազել էր 15%-ով: Բյուջեի դեֆիցիտը կկազմի ՀՆԱ-ի 6.5%, հույսերը, կապված եվրոյի ինտեգրման հետ, կմարեն: Կառավարական

կոալիցիան, որին առաջնորդում է Լիտվայի Քրիստոնեական Դեմոկրատական կուսակցությունը, աջակցություն է ակնկալում ժողովրդական կուսակցությունների կողմից և ամենայն հավանականությամբ չի հասցնի իր դրմինանտ դիրքերը պահել մինչև պաշտոնավարության ժամկետի ավարտը` 2012 թվականը: Մոցիալ դժգոհությունները, երկարաձգված ճգնաժամը կխթանեն քաղաքական անկայունության պահպանմանը:

■ Լիտվա ■ Եվրոտարածաշրջանի ՀՆԱ-ի աճ, %



<b>ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ</b>	
ՀՆԱ-ի աճ	0,4%
ՀՆԱ	\$814 մլրդ
Արժեզրկում	0,2%
Բնակչությունը	16,5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$49,250

Ճգնաժամն առաջացրել է լարված հարաբերություններ գործող կոալիցիայի երկու հիմնական գործընկերների միջև` Քրիստոնեական Դեմոկրատական կուսակցության և Լեյբորիստական կուսակցության միջև: Այնուամենայնիվ, այն կշարունակվի մինչև 2011 թվականի ընտրությունները: Այն օգնությունը, որը ցուցաբերվում է գործազրկության աճը կանգնեցնելու համար, կմեծացնի բյուջեի ճեղքվածքը, իսկ տնտեսությունը 2010 թվականին չնչին աճ կապահովի: Պետությունը, որն արդեն իսկ գտնվում է երկու հիմնական բանկերի հսկողության ներքո, հնարավոր է ստիպված լինի միջամտություն ցուցաբերել ներքին ֆինանսական համակարգին աջակցություն ցուցաբերելու

նպատակով, եթե ֆինանսական ճգնաժամը շարունակի խորանալ:

ՀՈԼԱՆԴԻԱ	
ՀՆԱ-ի աճ	1,9%
ՀՆԱ	\$476 մլրդ
Արժեզրկում	2,8%
Բնակչությունը	38,1 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$12,490

Վարչապետի և նախագահի միջև եղող լարվածությունը կշարունակվի մինչև հաջորդ ընտրությունները: Երկրի լարվածությունը պահելու գործում իրենց մասնաբաժինը կունենան նաև երկրի ներքում գործող կուսակցությունները: Տնտեսության զարգացմանը, կյաթանեն ներդրումները:

Էմիգրացիան, ծնելիության աճի տեմպերի դանդաղումը և ընտանիք կազմողների շարքերում միջին տարիքի բնակչության թվի ավելացումը նշանակում է, որ 2010 թվականից սկսած աշխատող բնակչության թիվը նվազում է՝ իր ազդեցությունը գործելով երկրի տնտեսության հեռանկարային աճի վրա:

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ	
ՀՆԱ-ի աճ	0.1%
ՀՆԱ	\$224 մլրդ
Արժեզրկում	0.3%
Բնակչությունը	10.7 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$21.000

Սոցիալիստական կուսակցությունը 2009 թվականի սեպտեմբերի ընտրություններից հետո կշարունակի մնալ խորհրդարանում ամենամեծ կուսակցությունը, բայց ակնհայտորեն այն իր դիրքները զիջել է 2005 թվականի ընտրություններից հետո: Այն կառավարությունում կունենա փոքրամասնական դիրքեր, այսպիսով 2010 թվականին այն կփորձի կրկին իր դիրքերն ապահովել կառավարությունում: Ակնկալվում է, որ կուսակցությունը կձևավորի հատուկ պառլամենտական կոալիցիաներ իրեն նպատակահարմար այս կամ այն օրենքն անցկացնելու նպատակով: Այս ռազմավարությունը հնարավոր է մեծացնի քաղաքական դաշտում առկա անկայունությունը:

ՌՈՒՄԻՆԻԱ	
ՀՆԱ-ի աճ	1,0%
ՀՆԱ	\$186 մլրդ
Արժեզրկում	3.3%
Բնակչությունը	21,4 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$8,680

Տարին կսկսվի նոր կառավարության ձևավորումով, բայց նրա վերջնական տեսքը կախված էր 2009 թվականի ընտրություններից:

Այն կարող է դառնալ բողոքների և ցույցերի տարի, քանի որ արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ներկայացված ծրագիրը զրգոում է միության կատաղությունը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ	
ՀՆԱ-ի աճ	2.5%
ՀՆԱ	\$1.414 մլրդ
Արժեզրկում	9.4%
Բնակչությունը	141.0 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$10.030

Նավթի գների կտրուկ անկումը և անընդհատ նվազող միջազգային արտաքին պահանջարկը Ռուսաստանի համար վատթարագայայն ժամանակահատվածն էր ճգնաժամի ամբողջ ընթացքում: Չնայած այս ամենին, 2010 թվականին ակնկալվում է, որ Ռուսաստանը կկարողանա արագորեն վերականգնել իր դիրքերը: Կառավարության կողմից ցուցաբերված աջակցության ուշացած ներգործությունը, ինչպես նաև ավելի ցածր տոկոսադրույքները նույնպես խթան կհանդիսանան տնտեսության աճի համար: Ռուսաստանի ազգաբնակչությունը, ընկճված լինելով հանդերձ, երես չի թեքում երկրի ղեկավարներից, իսկ վերջիններս կազմ և պատրաստ շարունակում են մնալ ամուր իրենց դիրքերում:

ՍԼՈՎԱԿԻԱ	
ՀՆԱ-ի աճ	1.5%
ՀՆԱ	\$89 մլրդ
Արժեզրկում	2.3%
Բնակչությունը	5.5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$16.310

Երկրի վարչապետը և իր ախյան կուսակցությունը հաջողության կհասնեն հունիսի ընտրությունների ժամանակ, բայց միևնույն ժամանակ կոալիցիոն գործընկերների աջակցության կարիքը կունենան: Կառավարությունում

Սլովակիայի ազգային կուսակցության և նմանատիպ ազգային ուժերի ակտիվացումը Հունգարիայում այս փոխհարաբերությունները կդարձնեն առավել լարված: Ճգնաժամի ազդեցությունը երկրի վրա մեծ էր, բայց այն կնահանջի 2010 թվականին:

ՍԼՈՎԵՆԻԱ	
ՀՆԱ-ի աճ	1.0%
ՀՆԱ	\$51 մլրդ
Արժեզրկում	1.7%
Բնակչությունը	2.0 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$25.510

Գործազրկությունը %



Նկատելի լարվածություն է առաջացել կառավարությունում գործող կուսակցությունների միջև: Սլովենիան կողմ է շուկայամետ բիզնես քաղաքականություններին, բայց կառուցվածքային բարեփոխումների հաջորդ փուլն անխուսափելի է, քանի դեռ կառավարությունը շարունակում է պայքարել տնտեսության վերականգնման համար:

ԻՍՊԱՆԻԱ	
ՀՆԱ-ի աճ	-0.8%
ՀՆԱ	\$1.435 մլրդ
Արժեզրկում	0.7%
Բնակչությունը	45.9 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$31.250


Երկրի վարչապետը կարող է հայտնվել ոչ երանելի դրության մեջ, եթե տարածաշրջանային կուսակցությունները ոչ պաշտոնական ձևով հրաժարվեն աջակցություն ցուցաբերել: Ճգնաժամի նախնական շրջանում

Իսպանիան մեծ վնասներ կրեց. սպառողների վստահությունը կշարունակի մնալ դեռ շատ փխրուն, իսկ անշարժ գույքի շուկան, չնայած արդեն իսկ բռնել է վերականգնման ուղին, դեռ շատ թույլ կլինի: Մինչև տարվա վերջ տնտեսությունում առանձնապես աճ չի սպասվում, գործազրկությունը և բյուջեի դեֆիցիտը կհատեն թույլատրելի սահմանը:

<b>ՇՎԵԴԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	1,3%
ՀՆԱ	\$435 մլրդ
Արժեզրկում	1,5%
Բնակչությունը	9,3 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$46,730


Զնայած տիրող ճգնաժամին՝ կառավարությունը շարունակել է աջակցել հանրությանը, բայց ընդդիմադիր կողմերը դեռ ուղիներ են փնտրում միասնական մնալու և մեկ միասնական ուժ ներկայացնելու համար: Սեպտեմբեր ամսին ընտրություններ կազմակերպվեն արդեն ուշ է, բայց եթե հարկերի կրճատման և բյուջեի ծախսերի ծրագիրը կարողանան արդարացնել իրենց, ապա կալիցիան հանրության աչքերում արդար և հարգին կերևա:

Շվեդիայի չորս խոշորագույն բանկերից երկուսը մեծ կախում ունեն Բալթյան երկրների տնտեսություններից, որոնք գտնվում են ոչ բարվոք վիճակում: Այդ բանկերը հավանաբար օգնության կարիք կունենան, եթե Բալթյան տնտեսություններն արագ տեմպերով չվերականգնվեն:


<b>ՇՎԵՅՑԱՐԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	0.7%
ՀՆԱ	\$473 մլրդ
Արժեզրկում	0.4%
Բնակչությունը	7.8 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$60.690

Շվեյցարիայի ժողովրդական կուսակցությունը՝ երկրի ամենամեծ կուսակցությունը, իր համար տեղ է գտել կառավարության ետին շարքերում՝ մեկ տարի՝ 2008 թվականին զբաղեցնելով ընդդիմադիր դիրքեր: Դա նշանակում է, որ կոնսենսուսի վրա հիմնված կառավարման համակարգը ավելի լավ է կարգավորվում և նպատակահարմար է տնտեսության արագ աճ ապահովելու համար, ինչպես նաև ֆինանսական համակարգում անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու համար՝ ներառյալ այն օրենքների վերամշակումը, որոնք նպաստում են

օրենքներում գաղտնիության թուլացմանը և համարժեք են Շվեյցարիայի բանկային գաղտնիքի մասին օրենքին: Այնուամենայնիվ, կուսակցությունը կշարունակի մնալ իր ընդդիմադիր դիրքերում:

<b>ԹՈՒՐԳԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	3.0%
ՀՆԱ	\$687 մլրդ
Արժեզրկում	7.0%
Բնակչությունը	73.3 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$9.370



Իսլամական արդարադատության և Զարգացման կուսակցության միջև ընթացող անդադար կոիվն իր ուրույն ազդեցությունն է ունենում նաև երկրում գործող տարբեր ինստիտուտների վրա: Այդ ամենից չի կարող գերծ մնալ նաև տնտեսությունը. նոր ճգնաժամը, ներառյալ երկրի պարտքային պարտավորությունների հատվածը, երկրի համար նոր սպառնալիք կդառնա, եթե կառավարությունը քայլեր չձեռնարկի արտաքին ներդրողների շարքերում իրենց երկրի նկատմամբ վստահությունը վերականգնելու ուղղությամբ՝ արժույթի միջազգային հիմնադրամի հետ նոր գործարքի մեջ մտնելու միջոցով: Կիպրոսի վերաբերյալ խաղաղ զրույցների վարումը, Եվրամիությանն անդամակցելու երկրի փորձերը կշարունակվեն, բայց այդ ամենն ոչ մի արդյունք չի տա: Երկրում զարգացման թափ կառնի տուրիզմը՝ Իստանբուլը, որպես Եվրոպական մշակութային կենտրոն:


<b>ՈՒԿՐԱԻՆԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	1.0%
ՀՆԱ	\$122 մլրդ
Արժեզրկում	12,2%
Բնակչությունը	45,5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$2,670

Քաղաքական ասպարեզում ծագած խնդիրները, կապված նախագահական ընտրությունների հետ, միանշանակ իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև տնտեսության վրա: 2010 թվականին երկիրը կապահովի տնտեսության ընդամենը 1.0%-ի աճ:

<b>ՄԻԱՅՅԱԼ</b> 	
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	
ՀՆԱ-ի աճ	0.6%
ՀՆԱ	\$2.255 մլրդ
Արժեզրկում	2.3%
Բնակչությունը	62.2 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$36.250

Տնտեսության աճը կամաց-կամաց կվերականգնվի, բայց այս ֆինանսատնտեսական ճգնաժամի կողմից երկրի ֆինանսական դիրքին, Լոնդոնի, որպես ֆինանսական կենտրոնի համբավին և Լեյբորիստական կուսակցության, որպես կայուն և ղեկավարող կուսակցությանը հասցված վնասները վերացնելու համար անհրաժեշտ է մի ամբողջ սերունդ: Ամենայն հավանականությամբ Մայիս ամսվա ընթացքում կկազմակերպվեն ընտրություններ, որտեղ Պահպանողական կուսակցությունը կհավաքի առավելագույն ձայներ Լեյբորիստական կուսակցությանը հակընդեմ և ընտրություններում հաղթող դուրս կգա:


ՀՆԱ- մեկ շնչի համար (PPP)  
 Ասիա (բացառությամբ Ճապոնիայի)  
 Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)



- Չինաստանը դառնում է աշխարհի երկրորդ մեծ տնտեսություն ունեցող երկիրը:
- Ասիայի տնտեսության աճն առանց Ճապոնիայի կազմում է 5.5 %:

<b>ԱՎՍՏՐԱԼԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	1,7%
ՀՆԱ	\$1.125 մլրդ
Արժեզրկում	2,8%
Բնակչությունը	21.5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$52.290

Ցանկացած այլ տարիներին, ընդդիմադիր ուժերի հարձակումները կառավարության տնտեսական կառավարման համակարգին կարող էին լուրջ վնասներ հասցնել երկրին: Բայց Ավստրալիան դասվում է այն հազվագյուտ երկրների շարքին, որոնք խուսափեցին ճգնաժամից 2009 թվականին՝ մասամբ ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունների շնորհիվ: Այդ պատճառով ճգնաժամը երկրին վնասներ հասցրեց միայն մակերեսորեն: Ավելի ուժեղ բիզնես ներդրումները և դեպի Չինաստան արտահանման ծավալների աճը կիրթանեն 2010 թվականին երկրի տնտեսության արագ աճին:


<b>ՉԻՆԱՍՏԱՆ</b> 	
ՀՆԱ-ի աճ	8,6%
ՀՆԱ	\$5,588 մլրդ
Արժեզրկում	2,4%
Բնակչությունը	1,339 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$4,170

Ապրանքների արտահանման համար որպես թիրախային երկրներ ընտրելով Եվրոպական երկրներն ու Միացյալ Նահանգները՝ Չինաստանը փորձում է նման ձևով ճգնաժամից ելքի ճանապարհ հարթել: Այնուամենայնիվ, տնտեսական խթանները առաջ են քաշում չափից ավելի արդյունաբերական հավելած և արժեթղթերի և ֆինանսական շուկայի ուռճացում: Բանկային վարկերի մեծ հոսքը, որոնք ուղեկցվում են ռիսկերի ոչ պատշաճ գնահատմամբ, կհանգեցնեն վատ վարկերի աճին:


<b>ՀՈՆԿՈՆԳ</b> 	
ՀՆԱ-ի աճ	2,8%
ՀՆԱ	\$218 մլրդ
Արժեզրկում	1,0%
Բնակչությունը	7.1 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$30.720

Մինչդեռ Չինաստանը հաստատակամ քայլերով առաջ է շարժվում, Հոնկոնգը, Բրիտանիայի նախկին գորամասը, դեռ կշարունակի պայքարել տնտեսության «հիվանդոտ» կողմերն առողջացնելու


համար: Այնուամենայնիվ, Չինաստամի ուժեղ դերակատարումը կօգնի Հոնկոնգին արագ վերացնելու վնասված կողմերը, բայց ընդհանուր առմամբ առևտրի զարգացումից կախված տնտեսությունը դեռ կմնա պասիվ դիրքերում:

<b>ՀՆԴԱՍՏԱՆ</b> 	
ՀՆԱ-ի աճ	6,3%
ՀՆԱ	\$1,468 մլրդ
Արժեզրկում	8,6%
Բնակչությունը	1,184 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$1,240

Հնդկաստանի ճկուն շուկան և արտահանումներից քիչ կախումը թույլ տվեցին երկրին դուրս գալ ճգնաժամից, ինչ-որ չափով նաև շնորհիվ վճռական ֆիսկալ աջակցության ծրագրերին և վարկավորման աճին: Բացասական կողմն այն է, որ ֆիսկալ դեֆիցիտը, որը տարիներ շարունակ անհանգստացնող հանգամանք էր դարձել, ավելի ու ավելի է մեծանում: Պարտքային պարտավորությունը ևս կմեծանա, և Հնդկաստանի կողմից մշակվող լուծումները, կախված ոչ կիրառելի վարկերի հետ, միայն ինչ-որ չափով կբողարկի հասունացող խնդիրը: Կառավարությունը կկենտրոնանա տնտեսության կարճաժամկետ աճի վրա:


<b>ԻՆԴՈՆԵԶԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	4,5%
ՀՆԱ	\$594 մլրդ
Արժեզրկում	5,1%
Բնակչությունը	243 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$2,440

Հնդկաստանի նման, ճկուն շուկան և արտահանումներից քիչ կախումն օգնում են երկրին հեշտությամբ հաղթահարել համաշխարհային ճգնաժամը՝ խթանելով աճի տեմպերի արագացմանը, որի նկատմամբ զարգացած տնտեսությունները կարող են միայն նախանձով լցվել: Երկրի նախագահն առաջնորդում է հուսահատված կառավարական կոալիցիան, այնուամենայնիվ նա կմնա իր դիրքերում՝ որպես երկրի ղեկավար: Տնտեսական դժվար պայմանները հստակ աճի միտում կունենան երկարաժամկետում խոստացված բարեփոխումների շնորհիվ այնպես, ինչպես աշխատավորական շուկայի լիբերալիզացիան:




<b>ՃԱՊՈՆԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	1,3%
ՀՆԱ	\$5.128 մլրդ
Արժեզրկում	-0,2%
Բնակչությունը	126.8 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$40.440

Երկիրը կհայտնվի «արտասովոր» քաղաքական դաշտում՝ Լիբերալ Դեմոկրատական կուսակցության 2009 թվականի պարտությունից հետո, որին նախորդել է կուսակցության 53 տարիների անընդմեջ իշխանությունը: Իր հերթին Ճապոնիայի դեմոկրատական իշխանությունը կփորձի թուլացնել քաղաքացիական ծառայությունների նկատմամբ առկա խստությունը և մեծացնել աղքատների վճարվող գումարների ծավալները: Տնտեսության վիճակը կբարելավվի, բայց վարանող Միացյալ Նահանգների և Եվրոպական երկրների սպառողները կսահմանափակեն արտահանումները, որոնք անհրաժեշտ են Ճապոնիային տնտեսությունը կայուն պահելու համար:

<b>ՂԱԶԱՆՍՏԱՆ</b> 	
ՀՆԱ-ի աճ	2,2%
ՀՆԱ	\$116 մլրդ
Արժեզրկում	6,7%
Բնակչությունը	16,2 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$7,160

Երկրի կանոնակարգողների միջև ծագած վեճերը/խնդիրները հանգեցրեցին կառավարությունում փոփոխությունների

իրականացմանը, բայց կառավարություն այնուամենայնիվ ներկայումս կայուն դիրքերում է: Չնայած երկրում չի նախատեսվում մինչև 2012 թվականն ընտրություններ կազմակերպել, այնուամենայնիվ կառավարությունը պատրաստ է դա անել, եթե տնտեսության վիճակն էլ ավելի վատանա, որը շատ հավանական է: Բանկերը դեռ անհանգիստ են, իսկ արժույթը կարող է ենթարկվել սպեկուլյատիվ հարձակման, իսկ նավթին առնչվող ծրագրերը, ապրանքների ավելի բարձր գները, ինչպես նաև փրկության ծրագրերի դրական արդյունքները կօգնեն տնտեսությանը վերականգնվել:


<b>ՄԱԼԱԶԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	3.9%
ՀՆԱ	\$220 մլրդ
Արժեզրկում	0.8%
Բնակչությունը	28.9 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$7,630

Երկրի նախագահն ու վարչապետն ունեն ամուր իշխանության հիմքեր և կշարունակեն մնալ ղեկավար դիրքերում: Մալազիայի համար այս ճգնաժամը նշանավորվեց՝ որպես տասնամյակի ամենավատ ճգնաժամ: Այնուամենայնիվ, 2010 թվականին տնտեսությունը կսկսի վերելք ապրել, բայց ներմուծման մեջ սպասվող այս արագ վերելքը կնպաստի առևտրի բալանսի խեղաթյուրմանը և սա իր հերթին կխթանի ՀՆԱ-ի աճի երկարաձգմանը:


<b>ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	1.9%
ՀՆԱ	\$133 մլրդ
Արժեզրկում	1.5%
Բնակչությունը	4.4 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$30.350

Բյուջեն, որը հետաձգում է հարկերի կրճատումը՝ նախատեսված ապրիլ ամսվա համար, և կրճատում կառավարության ծախսերը, հանրության հավանությանն արժանացավ՝ ենթադրելով, որ քվեարկողներն իրավացի են վարչապետի վրա ճնշումներ գործադրելու հարցում, և մնում են կառավարության աջակիցները: Տարիներ շարունակ աննպատակ վատնումներից հետո երկիրն ավելի շատ խնայողություններ կանի՝ կրճատելով ապառողների ծախսերը: Տների գների անկման կործանարար ազդեցությունները և կշարունակվեն/կպահպանվեն՝ արգելք դնելով սպառման վրա: 2009 թվականի


երկրի համար համեստ ճգնաժամը 2010 թվականին կվերածվի համեստ վերականգնման:

<b>ՊԱԿԻՍՏԱՆ</b> 	
ՀՆԱ-ի աճ	2,4%
ՀՆԱ	\$170 մլրդ
Արժեզրկում	8,6%
Բնակչությունը	185,5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$910

Ազգային անվտանգությունը կշարունակի մնալ երկրի կարևորագույն հարցը նախագահի համար: Պակիստանի Թալիբան առաջնորդի մահվանը հաջորդող հանգիստ ժամանակահատվածից հետո երկրի անօրեն հյուսիս-արևմտյան հատվածում կշարունակվի պահպանվել թշնամանքից բխող լարվածությունը, որը կառավարության կայունությունը հարցի տակ կառն: Ամերիկայի ռազմական և զարգացմանը խթանող օգնությունները կշարունակվեն, բայց Միացյալ Նահանգները Պակիստանի իշխանություններից կպահանջի ավելի մեծ հաշվետվողականություն: Պակիստանի հիմնական արտահանման տեքստիլ արդյունաբերությունը կտուժի՝ պայմանավորված թույլ համաշխարհային պահանջարկով:

<b>ՖԻԼԻՊԻՆՆԵՐ</b> 	
ՀՆԱ-ի աճ	3.7%
ՀՆԱ	\$166 մլրդ
Արժեզրկում	3.8%
Բնակչությունը	99.9 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$1.660

Աշխատողների դրամական փոխանցումները, \$ մլրդ




Խաղաղ գրույցները կունենիստ ապստամբների հետ կարող են ավարտվել 4 տարի անընդմեջ բացթողի վիճակում լինելուց, բայց վերջնական լուծումն անհավանական է: Երկրի նախագահը չի

կարող պաշտոնավարել երրորդ անգամ անընդմեջ, բայց կփորձի պահել իր ազդեցությունը՝ կենտրոնական ուժերի ուշադրությունը կենտրոնացնելով օրենսդրության վրա: Աշխատողների դրամական փոխանցումները կխթանեն տնտեսության մինչև 3,7 % աճին:


<b>ՍԻՆԳԱՊՈՒՐ</b> 	
ՀՆԱ-ի աճ	3,8%
ՀՆԱ	\$178 մլրդ
Արժեզրկում	2,0%
Բնակչությունը	5,0 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$35,630

Մինգապուրը ևս իր հերթին մեծ վնասներ կրեց համաշխարհային առևտրի անկումից, որն էլ ուղեկցվեց վարկային ճգնաժամով: Մի շարք արտաքին պահուստներ օգնություն ցուցաբերեցին մշտապես գործող ժողովրդական ծրագրերի կուսակցություն-կառավարությանը, բայց երկրի ներսում քաղաքական նորամուծությունների պահանջը կուժեղանա:

<b>ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ</b> 	
ՀՆԱ-ի աճ	2,8%
ՀՆԱ	\$882 մլրդ
Արժեզրկում	2.6%
Բնակչությունը	49.5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$17.810

Իշխանությունները կօգտագործեն դրամական և ֆիսկալ քաղաքականություն՝ տնտեսական ճգնաժամը մեղմացնելու համար՝ պարտքային պարտավորությունների և մեծացող բյուջեի ճեղքվածքի հաշվին: Տնտեսության համեստ աճը մի փոքր, բայց սպասված հանգստություն կներշնչի նախագահին: ԱՄՆ-ն աճի նոր հնարավորություններ ձեռք կբերի Հարավային Կորեայի հետ սերտ համագործակցության արդյունքում, բայց ազատ առևտրի վերաբերյալ համաձայնությունը կշարունակի ենթարկվել ՀԿ. Կորեայի և ԱՄՆ-ի ընդդիմադիր ուժերի հակահարվածներին:

**Արդյունաբերական արտադրությունը 2005՝ բազային տարի**



<b>ՇՐԻ ԼԱՆԿԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	6.3%
ՀՆԱ	\$49 մլրդ
Արժեզրկում	8.7%
Բնակչությունը	20.4 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$2.410

Թամիլ Թայգրսի նկատմամբ հաղթանակը խաղաղություն կպարզնի երկրին՝ իրանելով տնտեսության մոտ 6.3% աճին, բայց էթնիկ լարվածությունն ու ասիական հարձակումները կշարունակվեն: Երկրի նախագահը և իր համախոհ կուսակցությունը հաջողության կհասնեն ապրիլին կայանալիք պառլամենտական ընտրություններին, որը հնարավոր է նաև ավելի շուտ կազմակերպվի:

<b>ԹԱՅՎԱՆ</b>	
ՀՆԱ-ի աճ	3.9%
ՀՆԱ	\$376 մլրդ
Արժեզրկում	1.2%
Բնակչությունը	22.9 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$16.430

Նախագահը և կառավարությունն իրենց ամուր դիրքերում են: Տնտեսության աճը կհասնի մոտ 3.9 %-ի՝ մոտավորապես այնպես ինչպես 2009 թվականին: Չինաստանի հետ սերտ կապերի շնորհիվ երկրի ընդհանուր վիճակը կբարելավվի 2010 թվականին:


<b>ԹԱՅԼԱՆԴ</b>	
ՀՆԱ-ի աճ	3.3%
ՀՆԱ	\$274 մլրդ
Արժեզրկում	2.2%
Բնակչությունը	67.5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$4.060

Երկրում տիրող քաղաքական անհաշտ մթնոլորտի պատճառով ամենայն հավանականությամբ 2010 թվականը կարող է լինել ընտրությունների տարի: Սկիզբ առնելով թույլ ֆիսկալ դիրքերից՝ եռամյա աջակցության ծրագիրը, որը սկսվել է 2009 թվականից, կխթանի հանրային պարտքերի շեշտակի աճին՝ մինևույն ժամանակ իրանելով տնտեսության համեստ աճին:

<b>ՈՒԶԲԵԿՍՏԱՆ</b>	
ՀՆԱ-ի աճ	7,0%
ՀՆԱ	\$31 մլրդ
Արժեզրկում	8,7%
Բնակչությունը	28,6 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$1.100

Իսլամ Գարիմովը մեկ անգամ ևս ջանքեր կգործադրի իշխանությունում մնալու համար: Աջակցության ծրագրերը և հանրային ծառայողների աշխատավարձերի բարձրացումը կխթանեն սպառողական ծախսերի ավելացմանը, իսկ համաշխարհային շուկաների բարելավումը, որոնք կարող են նպաստել երկրի ապրանքների արտահանմանը, կնպաստի տնտեսության մոտ 7 %-ի աճին:


<b>ՎԻԵՏՆԱՄ</b>	
ՀՆԱ-ի աճ	6.0%
ՀՆԱ	\$101 մլրդ
Արժեզրկում	8,5%
Բնակչությունը	87.8 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$1.150



Վիետնամը համեմատաբար ավելի քիչ վնասներ է կրել համաշխարհային ճգնաժամից, քան իր հարևան երկրները, բայց աճը դեռ կիսված է 2007-ի և 2009-ի միջև: Կոմունիստ կառավարությունը, համապատասխանաբար կխթանի

տնտեսության աճին՝ մինևույն ժամանակ խախտելով հաշվեկշիռի հավասարակշռությունն ապագա տարիների համար: Կառավարությունը կշարունակի իր արտաքին կապերն ուղղել Չինաստանի հետ փոխհարաբերությունների լավացմանը (2009 թվականին ստեղծվել է թեժ գիծ): Այնուամենայնիվ, այդ ամենը կարող է առաջ բերել լարվածություն Միացյալ Նահանգների հետ հարաբերություններում:

<b>ՀՆԱ-ի աճ (սյուններ)</b>	
Գանադա	2,0%
Մեքսիկա	1,4%
ԱՄՆ	2,4%



<b>ԿԱՆԱԴԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	2,0%
ՀՆԱ	\$1.478 մլրդ
Արժեզրկում	1,4%
Բնակչությունը	34.0 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$43.450

Ամենայն հավանականությամբ 2010-ին կիրականացվեն ընտրություններ, քանի որ ընդդիմադիր Լիբերալների կողմից մշակված Պահպանողականներին տապալելու մանյովրն ոտքի կկանգնեցնի ապստամբներին: Արտահանման պահանջարկը կմեծանա 2010 թվականին՝ պայմանավորված ապրանքների գների կայունացման և ԱՄՆ տնտեսությունում նկատվող դրական տեղեկեցների հետ: Ճգնաժամը բացահայտեց ԱՄՆ պահանջարկից կախված լինելու վտանգները: Առևտրի

քաղաքականությունը կկենտրոնանա արտահանող շուկաների ուշադրությունը Չինաստանի նման արագ զարգացող տնտեսությունների վրա կենտրոնացնելու ուղղությամբ: Տնտեսությունը կունենա ոչ կտրուկ աճ. Երկրում գործազրկության բարձր ցուցանիշը կկանխարգելի տնտեսության արագ աճի տեմպերը:


ՄԵՔՍԻԿԱ	
ՀՆԱ-ի աճ	3.0%
ՀՆԱ	\$887 մլրդ
Արժեզրկում	3.3%
Բնակչությունը	112.5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$7.890

Միացյալ Նահանգների հետ սերտ կապերի պաճառով երկիրը 2009 թվականի ճգնաժամի ընթացքում ճաշակեց իր տնտեսության անցած ճանապարհի վատթարագույն ժամանակահատվածը, իսկ տնտեսության վերականգնումը կսկսի հյուսիսային սահմաններից: Քաղաքական դաշտում առաջացած խնդիրների պատճառով երկրում չհաջողվեց իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ: Այդ պատճառով էլ Մեքսիկան բավականին թույլ է դիմակայելու նոր ճգնաժամի, եթե համաշխարհային տնտեսության վերականգնման ջանքերն ապարդյուն անցնեն:


ԱՄՆ	
ՀՆԱ-ի աճ	2,4%
ՀՆԱ	\$14,840 մլրդ
Արժեզրկում	1,0%
Բնակչությունը	309,6 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$47,920

Ֆիսկալ դեֆիցիտի աճի շնորհիվ, որը 2009 թվականին կազմում էր ՀՆԱ-ի 12 %-ի չափով, իսկ 2010-ին՝ ավելի, տնտեսությունում աճ կնկատվի: Այնուամենայնիվ, երկրում գործազրկության աճի ցուցանիշը մնում է բարձր, իսկ փրկության ծրագրերը մոտենում են ավարտին: Երկրի նախագահը կփորձի պահպանել իր կուսակցության ձախակողմյան հակավածության ֆրակցիաների հավասարակշռությունը կենտրոնականների միջոցով, բայց մինևույն ժամանակ Կոնգրեսին կտրամադրի բավարար աջակցություն՝ իր ծրագրերն ի կատար ածելու համար: Չայրացած Հանրապետականներն իրենց հերթին փորձում են իրենց քայլերով խոչընդոտ հանդիսանալ, և չնայած նրանց


նմանատիպ մոտեցումը էական նշանակություն ունենալ չի կարող, այնուամենայնիվ, նոյեմբերի կեսերին Ժողովրդավարական կուսակցությունը կսկսի իր առաջատար դիրքերը զիջել:



մեծ աճ, քիչ պարուքեր Պարուք/ՀՆԱ (սյուներ, ձախակողմյան չափագիծ), %



ՀՆԱ-ի աճ (գծեր, աջակողմյան չափագիծ), %



Լատինական Ամերիկայի աճը կազմում է 2,4 %:

ԱՐԳԵՆՏԻՆԱ	
ՀՆԱ-ի աճ	1,4%
ՀՆԱ	\$293 մլրդ
Արժեզրկում	8,3%
Բնակչությունը	40,5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$7,230

Երկրի "անհաջողակ" նախագահն ամենայն հավանականությամբ կկորցնի իր աշխատանքը նախքան նախագահական պաշտոնական ժամանակավարության ավարտը՝ 2011 թվականը: Օրենսդիր դաշտը կարգավորում են ընդդիմադիր

ուժերը: Տնտեսական քաղաքականությունները, որոնք ի սկզբանե նախատեսված էին պաշտպանելու նախագահի իշխանությունը, ևս ենթարկվեցին ճգնաժամի բացասական ազդեցությունների: Քաղաքական և տնտեսական անկայունությունները պատճառ են դառնում արտաքին ռիսկերի ի հայտ գալուն:

ԲՈՒԿԻՆԱ	
ՀՆԱ-ի աճ	2.8%
ՀՆԱ	\$20մլրդ
Արժեզրկում	4.4%
Բնակչությունը	10.1 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$1.940

Քաղաքական մասնատվածությունը նախագահի և սենատի թեկնածուների միջև կպահպանվի: Երկրի նախագահն արդեն ամրապնդել է իր դիրքերը մինչև 2014 թվականը, նրա ղեկավարած քաղաքական մոդելը կմնա անփոփոխ: Ածխաջրածնից ստացվող կառավարության եկամուտները կկրճատվեն՝ դանդաղեցնելով տնտեսության վերականգնումը:

ԲՐԱԶԻԼԻԱ	
ՀՆԱ-ի աճ	3.8%
ՀՆԱ	\$1.669մլրդ
Արժեզրկում	4.0%
Բնակչությունը	196.8 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$8.480

Հաշվետվողական տնտեսական կառավարումը Բրազիլիային օգնեց խուսափել ճգնաժամի կատաղի ակիբներից: 2010 թվականին երկրում կնկատվի համեմատաբար մեծ աճ: Նույնիսկ այդ դեպքում, ղեկավարող Աշխատողների կուսակցությունը չի կարող իր հաղթանակը նշել հոկտեմբերին կայանալիք ընտրությունների ժամանակ: Ընտրողները հակված չեն ընտրել կուսակցության առաջնորդին, փոխարենը հաղթանակի դրոշմը ընդդիմադիր կուսակցության թեկնածունի կողմն է ծածանվում:

ՉԻԼԻ	
ՀՆԱ-ի աճ	3.9%
ՀՆԱ	\$170մլրդ
Արժեզրկում	2,3%
Բնակչությունը	17,1 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$9,950

2009 թվականի ճգնաժամը մեղմ էր երկրի համար, 2010 թվականին սպասվում է տնտեսության նկատելի աճ:

<b>ԿՈԼՈՒՄԲԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	2.4%
ՀՆԱ	\$250 մլրդ
Արժեզրկում	4.1%
Բնակչությունը	48.9 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$5.110

Աջակույմյան ուժերը հավանաբար կպահպանեն իրենց դիրքերը մայիսին կայանալիք ընտրություններում, բայց երկու անգամվա պաշտոնավարությունից հետո Ալվարո Յուրիբը միգուցե այլևս չդառնա կայանալիք ընտրությունների թեկնածուներից մեկն այն բանից հետո, երբ իր կուսակցությունը 2009 թվականին կոնգրեսի ընտրությունների ժամանակ պարտություն կրեց: Փոխարենը, նախկին պաշտպանության նախարարը կարող է շարունակել Յուրիբի տնտեսական բարեփոխումներ:

<b>ԿՈՒԲԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	3.5%
ՀՆԱ	\$59 մլրդ
Արժեզրկում	4.7%
Բնակչությունը	11.2 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$5.220

2008 թվականին ընտրված նախագահ Ռատուլը կկրճատի կառավարության ծախսերը և ներմուծումը: Փորձնական քայլեր կձեռնարկվեն ԱՄՆ-ի հետ հարաբերությունները երկարաժամկետում լավացնելու ուղղությամբ:

<b>ՈՒՐՈՒԳՎԱՅ</b>	
ՀՆԱ-ի աճ	2.0%
ՀՆԱ	\$34 մլրդ
Արժեզրկում	7.1%
Բնակչությունը	3,3 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$10,220

Նոր տարի, կառավարության նոր պաշտոնավարում, բայց ղեկավարող կուսակցությունը, որը հաղթանակ է տարել 2009 թվականի ընտրությունների ժամանակ, կմնա նույնը: Վերականգնվող տնտեսության հետ մեկտեղ գործող քաղաքականությունը կկենտրոնացվի ֆիսկալ հավասարակշռությունը վերականգնելու ուղղությամբ:

<b>ՎԵՆԵՍՈՒԵԼԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	-3.4%
ՀՆԱ	\$333 մլրդ
Արժեզրկում	31.4%
Բնակչությունը	28,6 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$11,660

Երկիրը կշարժվի համաշխարհային տնտեսության վերականգնման տենդենցի հակառակ ուղղությամբ և կմնա խոր ճգնաժամի մեջ: Այդքան քիչ եկամուտ ունեցող երկիրը դժվար թե կարողանա ֆինանսական աջակցություն ցուցաբերել: Շարժումները, որոնք ուղղված են կենտրոնացնելու կառավարության վերահսկողությունը, կխորացնեն սոցիալ երկպառակությունները և կհանգեցնեն կատաղի բողոքների, ցույցերի բարձրացմանը: Բայց Հյուգո Շավեի հեղափոխությունը կիրականանա, իսկ մասնատված ընդդիմությունն ի վիճակի չի լինի իր շահերն առաջ տանել:

<b>ԱԼԳԵՐԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	4.6%
ՀՆԱ	\$182 մլրդ
Արժեզրկում	3.7%
Բնակչությունը	35.5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$5.140

2009 թվականին երկրի նախագահի արդեն երրորդ անգամ վերընտրվելն ու պաշտոնավարությունը շարունակական բնույթ է կրում, բայց միևնույն ժամանակ կարող է մեծացնել երկրում առկա անկայունությունը, քանի որ իր հակառակորդները՝ և լիբերալները և իսլամիստները, ջանքեր չեն խնայում խափանելու նախագահի գործունեությունը: Դժգոհությունները կարող են հանգեցնել ցույցերի և հարձակումների:

<b>ԱՆԳՈԼԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	5.5%
ՀՆԱ	\$98 մլրդ
Արժեզրկում	11.4%
Բնակչությունը	19.0 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$5.160

Անգոլայի նախագահը, որը պաշտոնավարել է նախորդ երեք տասնամյակները, հավանաբար 2010 թվականին կայանալիք ընտրություններում հաղթանակ կտանի և իր հայտնի Անգոլայի ազատականացման շարժումը կհայտնվի դոմինանտ քաղաքական դիրքերում: Եթե մինչ այդ նավթի արտահանումը գտնվում

էր խղճուկ դիրքերում, ապա այժմ այն կփոխարինվի ալտիվ գործարքներով՝ խթանելով տնտեսության մոտ 5.5 % -ի աճին:

<b>ԿԱՄԵՐՈՆ</b>	
ՀՆԱ-ի աճ	1.4%
ՀՆԱ	\$24 մլրդ
Արժեզրկում	3.2%
Բնակչությունը	20.0 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$1.190

Երկրի նախագահի դիրքերը քաղաքական ասպարեզում կարելի է համարել ավելի քան ամուր: Ընդդիմադիր ուժերն արդեն զիջել են իրենց դիրքերը և անհանգստություն չեն պատճառում: Վերոհիշյալից ելնելով՝ ամենայն հավանականությամբ երկրի գործող նախագահը 2011 թվականի ընտրություններում կտանի փայլուն հաղթանակ:


<b>ԵԳԻՊՏՈՍ</b>	
ՀՆԱ-ի աճ	4.5%
ՀՆԱ	\$212 մլրդ
Արժեզրկում	6.2%
Բնակչությունը	84.8 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$2.500

Չնայած երկրում 81-ամյա նախագահի առողջության շուրջ ծավալվող անընդհատ քննարկումներին՝ այնուամենայնիվ նախագահին հաջորդելու հարցն առաջ է քաշված: Ղեկավարող կուսակցությունը հայտարարել է, որ չի պատրաստվում նախագահի թեկնածու ընտրել մինչ 2011 թվականի ընտրությունները, բայց որպես առաջնորդ պարոն Մուբարակի որդի Գամալի թեկնածության առաջընթացը 2010 թվականին ակնհայտ է, եթե նույնիսկ ընտրություններ չկազմակերպվեն: Միևնույն ժամանակ, կառավարությունն իր ծրագրերով կփորձի օժանդակել կայուն կենսակերպի ապահովմանը և նվազեցնել հանրության դժգոհությունները:



Բյուջեի ձեռքբերումը  
\$ մլրդ

— Բյուջեի եկամուտը  
— Բյուջեի ծախսը



<b>ԵՅՄՆԱԿ</b>	
ՀՆԱ-ի աճ	7.0%
ՀՆԱ	\$35 մլրդ
Արժեզրկում	12%
Բնակչությունը	75.1 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$464

Քաղաքական լարվածություն կառաջանա մայիսին կայանալիք ընտրությունների ժամանակ, բայց Եթովպիայի ժողովրդական Հեղափոխական Դեմոկրատական ճակատը կմնա իշխանությունում: Արժույթի միջազգային հիմնադրամն երկրի տնտեսության զարգացմանը խթանելու նպատակով տրամադրել է ֆինանսական աջակցություն, իսկ գյուղատնտեսության ոլորտում առաջընթացն ու երկրի կայուն դիրքերն երկիրը կներկայացնեն՝ որպես ամենաարագ զարգացող տնտեսություններից մեկը:

<b>ԻՐԱՆ</b>	
ՀՆԱ-ի աճ	2.9%
ՀՆԱ	\$415 մլրդ
Արժեզրկում	14.0%
Բնակչությունը	75.1 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$5.530


2009 թվականին վերընտրված երկրի նախագահը կրկին կհայտնվի հաստատուն դիրքերում՝ իր պաշտոնավարության երկրորդ ժամանակահատվածի ընթացքում: Նավթից ստացվող մեծ եկամուտը կզիջի իր դիրքերն Իրանի տնտեսական մոդելում՝ կրճատելով ներքին ֆինանսավորումը, մինչդեռ արտերկրյա ներդրումային հոսքերը

սահմանափակվում են սանկցիաների միջոցով:

<b>ԻՐԱԲ</b>	
ՀՆԱ-ի աճ	6.2%
ՀՆԱ	\$91 մլրդ
Արժեզրկում	6.1%
Բնակչությունը	31.3 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$2.910

Իրաքում ահաբեկչությունը մեծացել է Իրաքի երկրներից ԱՄՆ-ի ջոկատների հեռացմանը զուգընթաց: Երկրի վարչապետը հունվարին կփորձի ընտրություններ կազմակերպել, չնայած Շիա կոալիցիայից հեռու մնալու նրա որոշումը նվազեցնում է նրա ընտրվելու հնարավորությունը:

Բռնության արդյունքում քաղաքացիների զոհերի թիվը



<b>ԻՍՐԱՅԵԼ</b>	
ՀՆԱ-ի աճ	2.3%
ՀՆԱ	\$199 մլրդ
Արժեզրկում	2.9%
Բնակչությունը	7.6 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$26.300

Երկրի վարչապետը՝ Բինյամին Նետանյահուն և իր կոալիցիոն գործընկերները Նեսեթում ունեն 74 աթոռ, այսինքն՝ կեսից ավելին, բայց իր կառավարության ներսում առկա երկպառակությունները, նշանակում են, որ իր իրական իշխանությունը շատ ավելի թույլ է, քան ցուցանիշները կարող են վկայել: Լիկուդը, իր սեփական կուսակցությունը, կայուն դիրքերում է, բայց երկու ավագ կոալիցիոն գործընկերները վտանգի մեջ են: Կառավարությունը կօգտագործի հանրային ծախսերը տնտեսությունում աճ ապահովելու համար՝ ֆիսկալ դեֆիցիտը մեծացնելու հաշվին:

<b>ՀՈՐՂԱՆԱՆ</b>	
ՀՆԱ-ի աճ	3.0%
ՀՆԱ	\$23 մլրդ
Արժեզրկում	5.8%
Բնակչությունը	6.4 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$3.590

Անշարժ գույքի գների աներևակայելի աճը և տուրիզմի նկատմամբ վստահության պակասը նշանակում է, որ երկիրը դատապարտված է ճաշակելու համաշխարհային խորը ֆինանսական ճգնաժամը: Կառավարությունը կաջակցի ներքին պահանջարկին՝ անկախ բյուջեի վրա վերջինիս ազդեցությունից: Բարեփոխումների ջանքերը կկենտրոնանան տնտեսության, այլ ոչ թե քաղաքականության վրա, երբ Քինգ Աբդուլահը շարունակի մնալ իշխող դիրքերում՝ զինված ուժերի օժանդակությամբ:

<b>ՔԵՆԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	2.7%
ՀՆԱ	\$38 մլրդ
Արժեզրկում	6.5%
Բնակչությունը	40.9 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$940

Կոալիցիոն կառավարությունը, որը համակցում է երկրի նախագահին, վարչապետին և քաղաքական ախոյան “Նարնջագույն Դեմոկրատական շարժման” առաջնորդին, կհայտնվի բավականին երեքուն դիրքերում, չնայած այն դեռ հավանաբար կգոյատևի: Այնուամենայնիվ, անհամաձայնություններն առանցքային պաշտոնների նշանակումների և քաղաքական առաջնահերթությունների շուրջ կգտնեն դրական լուծումներ: Բարելավված համաշխարհային տնտեսությունն երկրի տնտեսությանը կխթանեն մոտ 2.7 %-աճի՝ 2009 թվականի տնտեսական անկումից հետո:

<b>ԼԻԲԱՆԱՆ</b>	
ՀՆԱ-ի աճ	3.3%
ՀՆԱ	\$32 մլրդ
Արժեզրկում	3.9%
Բնակչությունը	4.3 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$7.480

Երկրի նախագահը մեղադրում է իր հակառակորդներին, որոնք հովանավորվում են Իրանի և Սիրիայի կողմից, իրեն սահմանափակելու համար: Հակառակորդները վկայում են, որ նախագահի սեփական սխալները կնքել են իր ճակատագիրը: Քաղաքական նման խնդիրներից զատ՝ տնտեսությունը կապահովի մոտ 3.3 %-ի աճ:


<b>ԼԻԲԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	5.1%
ՀՆԱ	\$55 մլրդ
Արժեզրկում	5.4%
Բնակչությունը	6.5 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$8.350

Գնդապետ Մուամմար Քադաֆին՝ աշխարհի ամենաերկար ղեկավարող առաջնորդը, կերկարաձգի իր ռեկորդը ևս մեկ տարով՝ հիմքեր ստեղծելով իր դինաստիայի շարունակության համար՝ որպես հաջորդող տեսնելով իր որդիներից մեկին: Արևմուտքի հետ կապերը բարելավելու գնդապետի նպատակը հաջողություն չի ունենա՝ շնորհիվ իր ոչ խելամիտ ղեկավարման ոճի և քաղաքական որոշումների: Ինչևէ, երկրի նավթի հարստությունը վկայում է, որ տնտեսության աճն անխուսափելի է: Եթե տնտեսությունը 2009 թվականին ապահովել է մոտ 4% -ի աճ չնայած համաշխարհային ճգնաժամի թափին, ապա 2010 թվականին այն կկազմի 5.1 %:

<b>ՍԱՐՈՎՈ</b>	
ՀՆԱ-ի աճ	3.4%
ՀՆԱ	\$99 մլրդ
Արժեզրկում	2.6%
Բնակչությունը	32.3 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$3.060

Երկրի նախագահը նշանակալի սպառնալիքի և ընդդիմության չի հանդիպում իր կառավարման օրոք: Կենսակերպի խղճուկ ստանդարտները և գործազրկության բարձր ցուցանիշը դժգոհությունների ալիք կբարձրացնեն երկրում: Ֆիսկալ աջակցության ծրագրերը և առատ բերքն օգնեցին երկրին խուսափել համաշխարհային ճգնաժամից, իսկ 2010 թվականին կապահովի նույնիսկ փոքր աճ:

**Տուրիզմից ստացվող եկամուտը, \$ մլրդ**



<b>ՆԻԳԵՐԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	5.2%
ՀՆԱ	\$167 մլրդ
Արժեզրկում	8.5%
Բնակչությունը	152.2 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$1.100

Երկրի նախագահը դժվարություն կունենա ընտրություն կատարել ծրագրի, որն իրենից ներկայացնում է կարևոր, բայց ոչ այնքան հանրահայտ շուկայի բարեփոխումների փաթեթ և այն շահագրգիռ կողմերին օժանդակություն ցուցաբերելու ծրագրի միջև, որոնք հավակնում են նախագահի կողմից վարվող քաղաքական մոդելին: Այնուամենայնիվ, աշխատուժի շուկայի խնդիրներն երկրում առաջնային են՝ պայմանավորված համաշխարհային ճգնաժամի ազդեցությունների հետ, որտեղ մեծ վնասներ կրած նավթի շուկան առաջնային շարքերում է: Անուամենայնիվ, ոչ նավթային արդյունաբերությունների շնորհիվ երկիրը կարողացավ հաղթահարել 2009 թվականի ճգնաժամը, իսկ համաշխարհային պահանջարկի աճը հնարավորություն կընձեռի երկրին ապահովելու մոտ 5.2% -ի տնտեսության աճ 2010 թվականին:

<b>ՍԱՈՒԴԻԱՆ ԱՐԱԲԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	3.3%
ՀՆԱ	\$472 մլրդ
Արժեզրկում	4.0%
Բնակչությունը	26.2 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$18.020


Երկիրը կփորձի վերականգնել տնտեսության աճը՝ կառավարության վարկավորման ինստիտուտների, նպաստների և այլ հանրային գործարքների միջոցով: Տնտեսության աճը 2010

թվականին կկազմի մոտ 3.3 %: Նավթի գինը տարեկան միջինում կկազմի \$74՝ 19%-ով բարձր քան 2009 թվականին: Քաղաքական ասպարեզում նշանակալի փոփոխություններ չեն լինի:

<b>ՀՎ . ԱՖՐԻԿԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	3.1%
ՀՆԱ	\$275 մլրդ
Արժեզրկում	5.7%
Բնակչությունը	49.1 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$5.610

Ֆուտբոլի աշխարհի առաջնության պատրաստություններն արդեն իսկ տնտեսության աճի համար մեծ խթան են հանդիսանում՝ ենթակառուցվածքային ծախսերի միջոցով: Այնուամենայնիվ, տնտեսության աճին խանգարող հանգամանքները կպահպանվեն, իսկ կենսամակարդակի բարձրացումը կմնա կառավարության հիմնական մարտիքավերքերից մեկը: Գործազրկության բարձր ցուցանիշը կպահպանվի, մոտ 20%՝ սոցիալ անհանգստությունների պատճառ դառնալով:


**Գործազրկություն, %**



<b>ՏԱՆՉԱՆԻԱ</b>	
ՀՆԱ-ի աճ	5.0%
ՀՆԱ	\$23 մլրդ
Արժեզրկում	8.0%
Բնակչությունը	45.0 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$500

Երկրի նախագահը հավանաբար 2010 թվականին կայանալիք ընտրություններում հաղթանակ կտանի, չնայած ընտրողներից շատերը հավատում են, որ վերջին տարիներին երկրի տնտեսության աճն ամենևին էլ որևէ ազդեցություն չի ունեցել իրենց կենսակերպի վրա:

Նրա հակակոռուպցիոն արշավը կօգնի նրան մնալ առաջնային դիրքերում: Դոնորների կողմից ֆինանսավորվող շինարարությունը կօժանդակի տնտեսության աճին:

<b>ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱՐԱԿԱՆ</b>	
<b>ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> 	
ՀՆԱ-ի աճ	4.1%
ՀՆԱ	\$269 մլրդ
Արժեզրկում	4.2%
Բնակչությունը	5.6 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$48.280

Տնտեսական անկումը ստիպեց Դուբային բիզնեսի վարման գործում լինել առավել զգույշ և ուշադիր, բայց երկրի առաջնորդը կարծես թե չի փոխում բիզնեսի վարման իր մոտեցումները: Քաղաքական դաշտը մնում է կայուն, իսկ նշանակալի բարեփոխումները երկրում առաջիկա տարիների ընթացքում թվում են անհավանական: Նավթի արդյունաբերության զարգացման, ինչպես նաև էներգիայի հետ կապված որոշ նախագծերի շնորհիվ երկրի տնտեսությունը կսկսի կրկին աճել:

<b>ԶԻՄԲԱԲՎԵ</b> 	
ՀՆԱ-ի աճ	1.9%
ՀՆԱ	\$1.5 մլրդ
Արժեզրկում	4.6%
Բնակչությունը	12.6 մլն
ՀՆԱ- մեկ շնչի համար	\$120

Զիմբաբվեի Աֆրիկյան ազգային միության և Դեմոկրատական Փոփոխությունների շարժման միջև ընթացող համառ պայքարը, որն իր ուրույն ազդեցությամբ նպաստում է կառավարության թուլացմանը, կշարունակվի քաղաքական դաշտում: Այս ամենը կդանդաղեցնի տնտեսության վերականգնման գործընթացը, իսկ երկրում բռնությունների ի հայտ գալն օրհասական է թվում: Լրացուցիչ ընտրությունների կազմակերպման գործընթացը սառեցվել էր մինչև 2009 թվականը, բայց ընտրական շրջանի մոտեցման հետ մեկտեղ երկրում սիրող լարվածությունը թեժանում է: